№ 152 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 15

1908
ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 15 № 152

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱԶԱՏԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ
Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան	6 դօլլար
Եւրոպա »	30 ֆրանկ
Պարսկաստան »	10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կոպ.

«ՅՈՒՇԱՐՐԻ» յայտարարութիւնը 4-րդ երեսում

ԳԱՆՁԱԿԻ
Ս. Յովհաննես եկեղ. ծխական երկսեռ դպրոցի համար
Հարկաւոր են՝
հմուտ ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ
12 դասով, 1000 ր. ռոճիկ.
ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ 18—24 դասով, ժամը 25 և 30 ր.։
Դիմել մինչև յուլիսի 25-ը՝ Елисаветполь, попечительству арм. приходской во имя св. Іоанна церкви школы.
(Ե. Հ. Կ.) ա. (786) 3—1

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

—

Թիւրքական շարժումները այս անգամ բոլորովին նոր բնաւորութեամբ հանդէս եկան։

Կ. Պօլիսը չեղաւ նրանց կենտրօնատեղը և մայրաքաղաքի շրջանները չեղան ներգործական դեր կատարողները։

Ճակատագրական դէպքերը տեղի ունեցան Մանաստրի և Սելանիկի շրջաններում, որտեղ եթէ սպասվում էին յուզմունքներ, նրանք պէտք է լինէին բուլղարական, յունական, սերբիական գունաւորութեամբ, այլ ոչ երիտասարդ թիւրքերի յեղափոխական դրօշակներով։

Սակայն այդպէս դասաւորվեցին իրերը և հանգամանքները։

Այո, այ[illegible] և այդտեղ բացվեցին ճակատագրական [illegible]ուածքներ այն բռնակալական փառանի վրա, որ թիւրքական հին ռեժիմ անունն էր կրում։

Վերջին տասնեակ տարիներում չէին դադարում յուզմունքները օսմանեան կայսրութեան զանազան մասերում, բայց սուլթանը և Բարձրագոյն Դուռը կարողանում էին ջլատել ըմբոստ ոյժերը, կազմալուծել նրանց և կղզիացնել յուզվող շրջանները պետութեան ուրիշ մասերից։

Այդպէս ճնշվեցին և խեղդվեցին յուզմունքները մի ժամանակ Հայաստանում, մի ուրիշ ժամանակ դրուզների երկրում, մի երրորդ անգամ Արաբիայում, մի չորրորդ անգամ մակեդոնական ազգերի մէջ և այլն։

Կենտրոնական իշխանութիւնը զէնքի զօրութեամբ լռեցնում էր բողոքի և տառապանքի ձայները, բայց դժգոհութեան սերմերը մնում էին ամեն տեղ և բազմապէս խախտում կառավարութեան հեղինակութիւնը ժողովրդի աչքերում։ Բռնակալութեան և անարդարութեան չափազանց աչքի ընկնող արհաւիրքները դժգոհութեան հող էին պատրաստում ազգաբնակութեան բոլոր խաւերում, առանց կրօնի և ցեղի խտրութեան։

Թիւրքական կառավարութիւնը այս անգամ էլ մտածեց ճնշել սկսված շարժումը և դեռ պէտք է ջանքեր գործ դնէ այդ ուղղութեամբ, բայց տեսնում է մեծ դժուարութիւններ իր առաջ։ Սահմանադրական շարժումը վարակել է ազգաբնակութեան զանազան խաւերը, իսկ Ռուսաստանի և Պարսկաստանի սահմանակցութիւնը դարձրել է բնական, հրամայողական և անխուսափելի ազատագրական բարեփոխութիւնները խալիֆների երկրում։

Մինչև այժմ Բարձրագոյն Դուռը ճնշել է շարժումները զօրքի միջոցով։ Բայց ինչ կարող է նա անել, երբ զօրքը այլ ևս չէ ուզում հնազանդվել իշխանութեանը այդ կէտում, երբ նա մերժում է սուր բարձրացնել և գնդակ արձակել ազատագրական շարժման գործողների դէմ։ Վաշտեր վաշտերի ետևից անցնում են յեղափոխականների կողմը և զօրապետները այլ ևս չեն կարողանում կարգի հրաւիրել ոչ զինուորներին և ոչ օֆիցէրներին։

Առաջիկայ փաստերը ցոյց կը տան, թէ որքան խելահաս կը լինեն Եըլդըզ-Քեօշկի ղեկավարները և թէ ըմբռնելով իրականութեան պահանջները չեն բարդացնի անցողական շրջանը նոր խոստումներով և խաբէութիւններով, որոնցով միայն կը ձգձգվի Թիւրքիայի քաղաքական վերածնութեան գործը, ընդունելով սուր և արիւնահեղ յեղափոխական բնաւորութիւն։

Ա. Քալանթար

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ [illegible]ՕՐԵԱԿԻՆ

—

Կ. Պօլիս, 12 յուլիսի

Յուլիսի 11-ին սահմանադրութիւն շնորհելը ոգևորութիւն է առաջացրել երիտասարդ-թիւրքերի ինտելիգենցիայի մէջ։ Ազգայնականութեան մասնաւորները անցքերին վերաբերվում են անհոգ, իսկ քրիստոնեաները՝ [illegible] կերպով։ Գաւառներից բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ են ուղարկվում Եըլդըզին։

Սելամլըքի գնացող և սելամլըքից վերադարձող զօրքերին դիմաւորում էին բացագանչութիւններով ի պատիւ սուլթանի։ Սելամլըքը տեղի ունեցաւ սովորականի նման։ Թիւրքական լրագիրների խմբագրատների ու տպարանների վրա բարձր ցցված են դրօշակներ։ Երեկոյեան կը կազմակերպվի հրավառութիւն։ Յուլիսի 12-ին ամնիստիա է սպասվում քաղաքական յանցաւորների համար։ Քաղաքը իր սովորական տեսքն ունի։ Հանդարտութիւնն ու կարգապահութիւնը կատարեալ է։

Յուլիսի 12-ի գիշերը պատահած մեծ հրդեհից Պանկալթի թաղում այրվեց ռուսաց հիւանդանոցի մի մասը։ («Հ. Գ.»)

—

Վիեննա, 12 յուլիսի

«Corresp. Bureau»-ին հեռագրում են Կ. Պօլսից, որ ամբողջ մամուլը ողջունում է պետական կազմի վերակազմումը և շնորհակալութիւն է յայտնում սուլթանին, մատնացոյց անելով որ բարենորոգութիւնը տեղի ունեցաւ Թիւրքիայում առանց զոհերի։ Լրագիրները տպեցին սահմանադրութեան բնագիրը, նոյնպէս և այն հրովարտակը, որ հրատարակվել է իր ժամանակ Միտհատ-փաշայի անունով։ Ընդհանուր տրամադրութիւնը ոգևորված է, լի արժանաւորութեամբ։ Բ. Դրան բոլոր անկեղծ բարեկամները ցաւում են, որ սահմանադրութեան հրատարակումը տեղի ունեցաւ ուշ և չը նախորդեց սահմանադրութեան հրատարակմանը երիտասարդ-թիւրքերի ձեռքով, որ ուրեմն սուլթանին չէ պատկանում կամաւոր կերպով ռէֆորմներ շնորհելու պատիւը։ Միւս կողմից պէտք է նկատել, որ թէ ղեկավարող թիւրքական շրջանները և թէ դիպլոմատիական շրջանները շատ քիչ բացառութեամբ չափազանց սառը գնահատութիւն տածեցին երիտասարդ-թիւրքերի պրօպագանդային և շարժմանը երրորդ զօրաբաժնի շրջանում։ Միմիայն հատ հատ անձնաւորութիւններ հասկանում էին դրութեան լրջութիւնը շուտով շարժումն սկսվելուց յետոյ և առանց աջողութեան մատնացոյց էին անում սահմանադրութիւն շնորհելու անհրաժեշտութեան վրա, որպէս փրկութեան միակ միջոցը։ Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ երիտասարդ-թիւրքերի շարժման զոհերի թիւր մեծ չէ։ Մակեդոնիայում առայժմ արձանագրված է Վրասովի կայմակամի և մի ոստիկանական կոմիսարի սպանութիւնը։ Սէրէսում մինչև այժմ սպանված են մօտ տասը զինուոր։ Մահմեդականները այս բոլորը [illegible] տէր են Մակեդոնիայում բարենորոգումների եւրոպական ծրագրի և ռէֆորմներ մտցնելու համար արած քայլերը այս բոլորին [illegible] են մատնված։ Յուլիսի 9-ին և 10-ին տեղի ունեցած բազմաթիւ դէպքերում, բացի Օսման-փաշայի սպանումը մայոր Մէտլի ձեռքով, պէտք է յիշատակել, որ դիւիզիայի գեներալ Հիւսէյն-Բախրի-փաշան Ուսկիւբում, որը չէր ցանկանում միանալ շարժմանը, ստիպված էր փախչել Թաղոնիկ։ Ախրիդի դիւիզիայի գեներալ Հայրի-փաշան ստիպված էր անտարբեր վերաբերվել այդ բանին։ Բացի Մօնաստիրի միւթէսարիֆից, [illegible] արձակվեցին բոլոր կառավարիչները ուրիշ տեղերում։

Յուլիսի 10-ին Եըլդըզում, մինիստրների խորհրդի վերջին նիստում, որ շարունակվեց 3-ից մինչև 11 ժամը կէսօրից յետոյ, որոշվեց սահմանադրութիւն շնորհել։ Սուլթանը հաստատեց այդ վճիռը։ Այդ նիստի առիթով լըրատուում են ամեն տեսակ լուրեր։ Առաւօտից Եըլդըզում շնորհակալական բազմաթիւ հեռագրեր են ստացվում։ Ցերեկը Գալաթայում փողոցի ամբոխը ցոյց կազմեցին սէլամլըքը պահպանող զօրքերի համար։ Բօրսան սահմանադրութեան հրատարակման պատճառով նշանաւոր կերպով բարձրացրեց արժէթղթերի կուրսը։ Զօրքերը, սէլամլըքից վերադառնալիս, ամբոխի [illegible] ցոյցերի առաջ դարձան. ամբոխը կեցցէներ էր արձակում ի պատիւ սուլթանի։ Թիւրքական մամուլը շնորհակալութեան հեռագիր ուղարկեց սուլթանին։ («Հ. Գ.»)

—

Վիեննա, 12 յուլիսի

«Corresp. Bureau»-ին հաղորդում են Կ. Պօլսից, որ նոր մեծ-վեզիրի նշանակումը կատարեալ անակնկալ էր դիպլոմատների և նոյնիսկ լաւատեղեակ թիւրքական շրջանների համար։ Բօրսան ողջունեց նոր մեծ-վեզիրի նշանակումը գների բարձրացմամբ։ Այն հանգամանքը, որ Ֆէրիդ-փաշայի հրաժարեցումը կայացաւ մինչեւ օր չեղած այն հեռագրից, որով նրան շնորհված է Սև-Արծուի շքանշանը, ցոյց է բերում այստեղ, ինչպէս հաւանօրէն և ուրիշ տեղերում, ամենահակառակ խոստովանութիւններ այն մասին, թէ իբր դա պարտութիւն է Գերմանիայի և երեքպետական դաշնակցութեան քաղաքականութեան։ Փորձված և խաղաղասէր մարդիկ այդ կարծիքին չեն։ Թէև Քիւչիւկ Սաիդ փաշան և Քեամիլ փաշան անգլօֆիլներ համարվում են վաղուց, սակայն պէտք է ի նկատի ունենալ, որ նրանք հանդիսանում են Եւրոպայում համբաւ ունեցող թիւրքական պետական գործիչներ։

Մօնաստիրի վալի Հիլմի փաշան հրաժարական տուեց։

Միւնիր փաշայի մեկուսացման վերաբերմամբ տարածված սենսացիոն լուրերի և նրա՝ Աթէնք, Բելգրադ և Բուխարեստ գնալու առիթով պէտք է ընդգծել, որ Միւնիր փաշան աւելի վաղ էր ուղարկվել այդ պաշտօնով, քան տեղի ունեցան 3-րդ դիւիզիայի կորպուսի մէջ պատահած անցքերը։

Յուլիսի 9-ին մի թիւրք զինւոր նորից կրակեց [illegible] գնդապետ Նազիմի վրա, որ գնում էր Կ. Պօլիս։ Նազիմ բէյը, չը նայելով որ իր վրա չորս անգամ կրակեցին, անվնաս է մնացել։

Մի դեսպանատան՝ իր հիւպատոսից հեռագիր ստացաւ, որով հաղորդվում է, թէ Վօդէնի զօրանոցներից բազմաթիւ զինուորներ փախուստ են դիմում։ («Հ. Գ.»)

—

Վիեննա, 12 յուլիսի

Բուլղարական պահեստի զօրքերի զէնքի կոչվելու յուզալից լուրերը հերքվում են բուլղարների կողմից Թիւրքաց և դիպլոմատիական ղեկավարող շրջաններին արված հաւաստիացումներով։ («Հ. Գ.»)

—

Վիեննա, 12 յուլիսի

«Corresp. Bureau»-ին հեռագրում են Սօֆիայից, որ Թիւրքիայում սահմանադրութիւն յայտարարելու լուրը խոր տպաւորութիւն թողեց քաղաքական բոլոր շրջաններում և ընդունված է ընդհանուր համակրութեամբ։ Քաղաքական շրջանները ենթադրում են, որ սահմանադրական փոփոխութիւնը կը ծառայէ նաև յօգուտ Թիւրքիայի քրիստոնեայ ազգութիւնների։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 12 յուլիսի

Սահմանադրութիւնը վերականգնելու որոշումը ընդունված է ամբողջ նախարարութեամբ կազմված մինիստրների խորհրդի երկարատև նիստից յետոյ, երբ վէճերը յայտնել է, որ երկրորդ և երրորդ կորպուսները պատրաստվում են յարձակվելու մայրաքաղաքի վրա, որը պաշտպանել անկարող է։ Ներքին գործերի մինիստրութեան առաջին [illegible] էր, որ պահանջեց [illegible] անյապաղ հրատարակված [illegible]։

Մայրաքաղաքի մէջ հանգիստ է, ազգաբնակութիւնը կատարված անցքերին վերաբերվում է կատարեալ անտարբերութեամբ։ Ուրախ ենք առ այժմ [illegible]։ Դրօշակներ չը կան։ («Հ. Գ.»)

—

Բեռլին, 12 յուլիսի

Մամուլը նայում է թիւրքական անցքերի վրա իբրև արդիւնք երիտասարդ թիւրքերի շարժման և յատկանշում է, որ սահմանադրութիւնը առայժմ լոկ ձևական բնաւորութիւն ունի և ներքին իմաստ տալու կարիք ունի։ Յետոյ միայն կարելի է վճռել այն հարցը, թէ նա ինչ նշանակութիւն ունի Թիւրքիայի համար։

«Köln. Zeit.» լրագիրը ասում է, որ կարևորը ոչ այնքան սահմանադրութիւն յայտարարելու փաստն է, որքան այն ոգին, որով նա պէտք է իրագործվի։ Մի այլ տեղ լրագիրը ասում է. «Յանկալի կը լինէր, որ սահմանադրութիւնները կատարված անցքերից դասեր առնէին։ Եւրոպան պէտք է խոստովանէ, որ իր ընտրած ճանապարհները սխալ էին։ Մակեդոնիայի ապստամբութիւնը մի բարձրագոյն արդիւնք է նախազգուշութեան ոչ միայն սուլթանի համար, այլ և եւրոպական ամբողջ քաղաքականութեան համար։ Նախազգուշացումը այնքան լուրջ է, որ նրան անտես անել անկարելի է։ Եւրոպայի ընդհանուր դրութիւնը այժմ (?) այնքան նպաստաւոր է, որպէսզի կարելի լինէր թոյլ տալ խաղալ կրակի հետ, որը կարող է մի այն տեսակ հրդեհ առաջ բերել, որպիսին այժմ տեղի ունի Մակեդոնիայում»։

«Post» լրագիրը ասում է, որ Սաիդ փաշան դիպլոմատիական շախմատի խաղ խաղաց։ Յամենայն դէպս Եըլդըզում յոյս ունէին, որ շնորհիւ կատարված անցքերի՝ անգլօ-ռուսական բարենորոգումների նախագծերը գոնէ այժմ ընթացք չեն ստանայ։

«Berl. Tagebl.»-ը ասում է, որ սահմանադրութիւն շնորհելով միաժամանակ մի քանի նպատակների հասան. նախ որ երիտասարդ-թիւրքերի շարժումից անջատեցին նրա համախոհներից շատերին, երկրորդ՝ յայտնի չափով ցոյց տուեցին, որ ընդառաջ են գնում անգլիական ազատամիտների պահանջներին։ Բացի դրանից Մակեդոնիայում բարենորոգումներ մտցնելու համաձայնութիւնը շղկապեցին պարլամենտի հետ և նրա համաձայնութիւնից կախում ունի։ («Հ. Գ.»)

—

Թիւրքիայում կատարվող անցքերին չափից դուրս կարևոր նշանակութիւն են տալիս։ Ռուսաց արտաքին գործերի մէջ Կ. Պօլսից ստացված մանրամասն զեկուցումները Թիւրքիայի դրութիւնը նկարագրում են մռայլ գոյներով։ Սուլթանի պալատում պառակտում է սկսվել։ Պետութեան բարձրաստիճան պաշտօնեաների մի մասը խորհուրդ է տալիս սուլթանին զիջումն անել և անմիջապէս յայտարարել ներումն և բարենորոգումների ծրագիրը։ Միւս մասը, ընդհակառակը, պնդում է, որ ապստամբութիւնը պէտք է խեղդել արեան մէջ։ Շարժումը գնալով լայն չափեր է ընդունում։ Եանինայի մօտ բանակ դրած զօրքերը, որ բաղկացած է ռեդիֆների երկու գնդից և մի լեռնային թնդանօթից, ապստամբել են։ Շարժումը ղեկավարում են օֆիցէրները։

Դիպլոմատիական շրջաններում հաղորդում են մի սենսացիոն լուր՝ թէ Բօսնիայի աւստրիական զօրապետը հրաման է ստացել երկու գունդ նշանակել սահմանագլխի վրա ռազմական պատրաստութիւններով։ Խօսում են, որ Աւստրիայի ու Գերմանիայի միջև մի կողմից, միւս կողմից Թիւրքիայի, գոյութիւն ունի մի համաձայնութիւն, որի հիման վրա աւստրիական զօրքերը պէտք է խեղդեն դրանց ապստամբված վիլայէթները։ Այդ արվում է ոչ բարեկամաբար տրամադրված պետութիւնների—Ռուսաստանի և Անգլիայի կողմից օկկուպացիայի փորձերի առաջն առնելու նպատակով։ («Вечеръ»)

—

Երիտասարդ-թիւրքերի պարագլուխ արտասահմանում ապրող Ահմէդ-Րիզա-բէյի ասելով, զօրքում սահմանադրութեան կողմնակիցների մէջ շատ մարդիկ կան, որոնք ձգտում են սուլթան Աբդիւլ-Համիդի գահընկէցութեան։

Երիտասարդ-թիւրքերը իրանց զօրամասերը կազմակերպում են ծառայութիւնից փախած զինուորներից և շարժմանը միացող գիւղերի բնակիչներից։

Ապստամբներին ճնշելու համար սուլթանը հրաման արձակեց նոր գնդեր զէնքի կանչելու։ («Բ.»)

—

Պարիզից յուլիսի 8-ին (21-ին ն. տ.) հեռագրում են „P. C.“ լրագրին հետևեալը.

Ստացված են Կ. Պօլսից հետաքրքրական տեղեկութիւններ։ Եըլդըզ-Քէօշկում տեղի ունեցած մինիստրների խորհրդի վերջին նիստում, մինիստրները միաձայն խորհուրդ են տուել սուլթանին զիջումներ անել, մտցնել մի քանի բարենորոգումներ և ներումն շնորհել։ Բայց սուլթանը զայրացած անուանել է մինիստրներին դաւաճաններ։ Մինիստրները կասկած են յայտնել Փոքր-Ասիայից վերադարձած զօրքերի վստահելիութեան վրա և երկիւղ են կրել, որ եթէ նրանց ուղարկելու լինեն Մակեդոնիա, կարող են անցնել ապստամբված զինուորների կողմը։

Սուլթանը յայտնել է, որ նա հաւատում է միայն ոյժին և որ վճռել է արեան մէջ խեղդել ապստամբութիւնը։

—

Կ. Պօլիս, 13 յուլիսի

Յուլիսի 12-ին հրատարակվեց իրադէ քաղաքական բանտարկեալների ներման (ամնիստիայի), ցենզուրայի և գաղտնի ոստիկանութեան վարչութեան ջնջման մասին։ Ցերեկով Ստամբոլում կայացաւ մի փոքր միտինգ։ Մի քանի հազար թիւրքեր միտինգից երաժշտութեամբ և դրօշակներով դիմեցին Բ. Դուռը և յանձնեցին մեծ վէզիրին և միւս մինիստրներին երախտագիտական ուղերձ սուլթանի անունով։ («Հ. Գ.»)

—

Աթէնք, 13 յուլիսի

Ամբողջ մամուլը գոհացմամբ ողջունում է Թիւրքիայի քաղաքական կազմի փոփոխումն և կարծիք է արտայայտում, որ եթէ անցումն դէպի սահմանադրական ռէժիմը մտածված է շիտակօրէն, յունական տարրը կը գտնէ նրա մէջ միայն թեթեւացումն քաղաքական բարեյաջող զարգացման մարզում։ («Հ. Գ.»)

Բեռլին, 13 յուլիսի։

«Նորդ-Դեօյտշէ Ալգեմ. Ցայտունգը» Թիւրքիայի դէպքերի առիթով գրում է. «Ըստ երեւոյթին, այժմ հանդէս է գալիս թիւրքական նացիոնալիզմը առանձին ազգութիւնների քաղաքականութեան դէմ, որի փորձը կատարվեց Մակեդոնիայում ի վնաս մուսուլմանական տարրի և որի վերաքննութիւնը միշտ յանձնարարվել է Գերմանիայի կողմից։ Մակեդոնական գործերի անդրադարձ քննութեան ժամանակ չը պէտք է աչքից թողնել թիւրքական ազգային ինքնագիտակցութեան այդ զարթնումը»։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 13 յուլիսի

Թիւրքաց լրագիրները զետեղում են գովասանական յօդուածներ. Նրանց նմանում են յոյն և հայ լրագիրները, շեշտելով, որ սահմանադրութիւնը վերացնում է ցենզուրան, որ դեռ գործում էր։ Ֆրանսիական և անգլիական լրագիրները աւելի զսպված են գրում, բաւականանալով համառօտ նկատողութիւններով կատարված ակտի կարեւորութեան մասին։ Ամբողջ մամուլը վերարտադրում է գունաւոր լիտերներով սահմանադրական ստատուտի բնագիրը, որ սահմանում է պարլամենտի բացումը նոյեմբերի 1-ին։

Մայրաքաղաքում ոչինչ չէ փոխվել, ոստիկանական խստութիւնները առաջվանն են։ Տրամադրութիւնը առ այժմ ճնշված է. միայն յուլիսի 12-ի երեկոյեան Ստամբոլում եղան սահմանադրութեան համակրական մի քանի փողոցային ցոյցեր։ Բացի երիտասարդութիւնից և երիտասարդ-թիւրքերից, որոնք տօնում են յաղթանակը, քչերն են հաւատում նոր սահմանադրական ձգտումների անկեղծութեան։ Գեներալիտէտը և պաշտօնեաները սահմանադրութեան դէմ են։ Լուսաւորեալ շրջաններում սահմանադրութեան վերականգնումը զինուորական շարժման ճնշման տակ համարվում է մանեօվր՝ զօրքը հանգստացնելու նպատակով. Յուլիսի 13-ին մեծ դիւանագիտութիւնների ներկայացուցիչների մեծ մասը այցելեց նոր մեծ վէզիրին։

Հիւպատոսական զեկուցագրերի համաձայն, յուլիսի 11-ին երիտասարդ-թիւրքերը գրաւեցին կառավարչական շինութիւնը Եանինայում և հրատարակեցին սահմանադրութեան ներմուծումը։ Կարգը չէ խանգարված։ Բացի յուլիսի 10-ին Սալոնիկում զինուորական կոմիտէի հրամանով հրացանի բռնված երեք լրտեսներից և երկու օֆիցերներից, մինչև այժմ շարժման ուրիշ նոր զոհերի մասին տեղեկութիւն չէ ստացվել։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 13 յուլիսի

Նոր զէնքի կանչված փոքր-ասիական ռեդիֆ զօրքերը յետ են կոչվում երրորդ կորպուսի շրջանից։

Սահմանադրութեան վերականգման՝ մասին յուլիսի 11-ին պաշտօնապէս հաղորդվեց ամբողջ Թիւրքիայում, որ ամեն տեղ մեծ ոգեւորութիւն առաջ բերեց։ Հակումը դէպի սահմանադրութիւնը երեւաց Երզրումում, երբ Սալոնիկից և Ադրիանուպոլսից զեկուցումներ ստացվեցին, թէ սպաները սպառնում են, եթէ սահմանադրութիւն չը շնորհվի, ձեռնարկել միջոցների Կ. Պօլսի կամ մայրաքաղաքի դէմ։ Վերջ ի վերջոյ սահմանադրութեան հրատարակութիւնը տեղի ունեցաւ այն լուրի ճնշման տակ, որ երիտասարդ-թիւրքերը Մակեդոնիայի մի քանի քաղաքներում արդէն հրատարակել են սահմանադրութիւնը։ («Հ. Գ.»)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԳԱԼՈՒՍՏԸ

Ստոկհօլմ, 12 յուլիսի

Յուլիսի 11-ի հանդիսաւոր ճաշին ի պատիւ Ֆալիէրի Գուստաւ թագաւորը կենաց առաջարկեց, որի մէջ ուրախութիւն յայտնեց նախագահի գալու առիթով։ «Երբեք չի մոռացվի,—ասաց թագաւորը,—որ շվէդական արքայական տունը իր սկիզբն առնում է ֆրանսիական ազնիւ ազգից»։ Ապա թագաւորը յիշեցրեց անցեալ «դարերը», երբ Ֆրանսիան և Շվէդիան միասին ընթանում էին պատերազմներում։ «Թէպէտ և այդ օրերը վաղուց պատմութեան բաժին են դառել,—ասաց թագաւորը,—բայց մինչև այժմ նրանք շարունակում են կենդանի մնալ շվէդական ժողովրդի սրտերում շնորհիւ դէպի մեծ ազգն ունեցած ժառանգական աւանդական համակրութեան զգացմունքների։ Աւելի ևս ամուր են, քան անցեալ ժամանակների յիշողութիւնները, այն կապերը, որոնք կապում են մեզ քաղաքակրթութեան հետ, որի հմայքը երբեք չի կորցնի իր ծագման ույժը շվէդական ժողովրդի համար։ Խաղաղ նուաճման շրջանում մենք կռւում ենք միասին մարդկութեան առաջադիմութեան և բարօրութեան համար։ Խորին գոհունակութեամբ զգացմունքով ես տեսայ, թէ որպէս Ֆրանսիան և Շվէդիան մի քանի ամիս առաջ հիւսիսային միւս պետութիւնների հետ միասին ստորագրեցին համաձայնութիւն Հիւսիսային ծովի մասին։ Խաղաղութեան ամրացումը հիւսիսային ծովին սահմանակից երկիրների միջև կարող է միայն նպաստել երկու ազգերը միացնող բարեկամութեան և համակրութեան ամրացման։ Եւ այդ զգացումներով, որոնք յիշեցնում են փառաւոր ժամանակները, յոյսերը ապագայի, խաղաղութեան և ընդհանուր աշխատանքի վրա, բարձրացնում եմ բաժակը ֆրանսիական հանրապետութեան նախագահի և ֆրանսիական մեծ ազգի երջանկութեան և բարօրութեան համար»։

Ֆալիէր ջերմագին շնորհակալութիւն յայտնեց թագաւորին ընդունելութեան համար և իր հիացմունքը արտայայտեց իրան դիմաւորելու համար ուղարկված էսկադրայի համար։ Ապա նախագահն ասաց, որ իրան յայտնի է, թէ որպէս սերտ կերպով կապված է շվէդական արքայական տունը այն ազգի հետ, որից իր ծագումն է առնում։ Ինքը կարող է անձամբ վկայել, թէ Ֆրանսիան որպիսի խոր համակրութիւն է տածում դէպի շվէդական ժողովուրդը։ «Կապը,—շարունակեց նախագահը,—մեր երկիրների միջև, որոնք, չը նայելով աշխարհագրական հեռաւորութեանը, գործում էին միասին, և ընդհանուր աւանդութիւնները կարելի է, անկասկած, համարել ամենափառաւորները, որովհետև Շվէդիան և Ֆրանսիան արդէն մի քանի դարեր առաջ միացրին իրանց ույժերը՝ ամրացնելու համար խաղաղութեան և ազգային անկախութեան գաղափարները։ Որպէս ձերդ մեծութիւնը բարեհաճեց ասել, Շվէդիան և Ֆրանսիան խաղաղ նուաճման շրջանում գործում էին միասին խաղաղ գաղափարների զարգացման գործում։ Հէնց այդ շրջանում մեր երկիրները բանակցութիւններ էին վարում, որոնք նպատակ ունէին սահմանել խաղաղութեան նոր երաշխաւորութիւններ։ Գործողութիւնների և մտքերի համանմանութիւնը կարող է միայն նպաստել բարեկամութեան և համակրութեան այն կապերի խորն ամրանալուն, որոնք միացնում են մեր ազգերը։ Ոգևորված այդ զգացմունքներով, որ այնպէս կատարեալ արտայայտում են աւանդութիւնները, որոնց Ֆրանսիան և Շվէդիան միշտ հետեւում էին, ես խմում եմ ձեր մեծութեան, արքայական տան և շվէդական ազնիւ և քաջ ժողովրդի բարօրութեան կենացները»։

Ստոկհօլմ, 12 յուլիսի

Յուլիսի 11-ին նաւահանգստում եղող զինուորական նաւերի թնդանօթաձգութիւնը աւետեց ֆրանսիական նաւատորմի մտնելը։ Երբ «Կասսինի» նաւը խարիսխ գցեց, Ֆալիէր անցաւ արքայական մակոյկը, որը շուտով թնդանօթաձգութեան ուղեկցութեամբ մօտեցաւ արքայական պալատի սանդուղքին։ Գուստաւ թագաւորը ողջունեց նախագահին և նրա հետ միասին անցաւ պատուաւոր պահակախմբի գլուխը։ («Հ. Գ.»)

Րեվէլ, 12 յուլիսի

«Շտանդարտ» կայսերական զբօսանաւը Թագաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորօվնայի հետ Օգոստափառ երեխաներով եկաւ րեվէլեան նաւակայանը։ «Շտանդարտին» ուղեկցում էին Կրօնշտադից դէպի Րեվէլ «Պօլեարնայա Զվէզդա» և «Ցարեվնա» կայսերական զբօսանաւերը։ Բացի դրանից Րեվէլի կայարանն եկան «Սլավա» և «Ցեսարեվիչ» զրահակիրները և «Ծովապետ Մակարօվ», «Բոգատիր» և «Օլեգ» զրահակրային կրէյսերները։ («Հ. Գ.»)

Րեվէլ, 12 յուլիսի

Պալատի մինիստրի հեռագիրը. «Նորին Մեծութիւնները պալատի և ծովային մինիստրների, Նորին Մեծութեան ֆլագ-կապիտանի և շքախմբի անդամների ուղեկցութեամբ բարեհաճեցին այցելել «Ցեսարեվիչ» զրահակիրը և «Օլեգ» կրէյսերը։ Նաւակազմը նայելուց յետոյ, Նորին Մեծութիւնները բարեհաճեցին աչքի անցնել շինութիւնը, որից յետոյ շոգեմակոյկով, ուրաների ուղեկցութեամբ, գնացին «Շտանդարտ» զբօսանաւը։ Նաւը նստելու ժամանակ նաւերից թնդանօթաձգութիւն եղաւ 31 անգամ։ Նոյն օրը «Շտանդարտ» զբօսանաւի վրա Բարձրագոյն ճաշին, բացի Նորին Մեծութիւնների ուղեկցող շքախմբի անդամներից, հրաւիրվեցին ծովային և արտաքին գործերի մինիստրները, զօրաբաժնի և նաւերի հրամանատարները»։

Պետերբուրգ, 13 յուլիսի

«Россія» լրագրի մէջ Թագաւորի և Ֆալիէր Նախագահի առաջիկայ տեսակցութեան առիթով տպագրված է մի առաջնորդող յօդուած, որտեղ, ի միջի այլոց, ասված է. «Տեսակցութիւնը ֆրանսիական հանրապետութեան Նախագահի կողմից քաղաքավարական մի ակտ է և մի անգամ ևս ընդգծում է ֆրանս-ռուսական դաշինքի անխախտութիւնը»։ Այնուհետև թերթը նկատում է, որ չը խօսելով այն ընդհանուր համակրութեան մասին, որ կը գտնէ հանրապետութեան նախագահը Ռուսաստանում, որը Ֆրանսիայի դաշնակցութեան մէջ տեսնում է իր արտաքին քաղաքականութեան անկիւնաքարը, այդ այցելութիւնը անկասկած միջազգային արժէք ունի։ Երկու պետութիւնների խաղաղասիրութիւնը, շարունակում է լրագիրը, բաւականաչափ արդէն փորձված է, որպէսզի կարելի լինի վստահութեամբ հաւատալ, որ այդ փառաւոր տեսակցութիւնը կը ծառայեցվի յօգուտ ընդհանուր խաղաղութեան։ «Ահա թէ ինչու,—վերջացնում է լրագիրը,—ողջունելով դաշնակից Ֆրանսիայի գլխաւորին, մենք յոյս ենք յայտնում, որ այն հանդէսը, որին մասնակցում է ամբողջ Ռուսաստանը իր հիւրին դիմաւորելու համար, ոչ միայն ստուեր չի ձգի նրա սահմաններից դուրս, այլ և համակրութեամբ կընդունվի ամենուրեք իբրև եղբայրական միութիւն երկու պետութիւնների, որոնք հաւասար կերպով կողմնակից են ընդհանուր խաղաղութեան բարօրութեանը»։ («Հ. Գ.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 13 յուլիսի

Յուլիսի 12-ին ամբողջ օրը ապարդիւն կերպով շարունակվում էր թնդանօթաձգութիւնը երկու կողմից։ Ռուսահպատակները Թէհրանի եւրօպական միսսիայի միջոցով հեռագրական խնդիր են ուղարկել շահին երկրում վերահաստատել կարգապահութիւնը և ապահովել կեանքն ու գոյքը քաղաքացիների, յետ կանչել տալով Ղարաջադաղի ձիաւորներին, որոնք անկարգութիւններով են միայն զբաղված, և արձակել սուշաքէրդները Իսլամիէի ժողովները։ («Հ. Գ.»)

Պարսկական շահը ներկայումս զբաղված է իր զինուորական ույժերը աւելացնելու գործով ոչ միայն Թէհրանի մէջ, այլ և գաւառներում։

«Post» լրագրի ստացած տեղեկութիւնների համաձայն, պարսկական շահի եղբայր Զաււլ-էս-Սալթանէն և նրա որդի Ֆաթուլլա-Միրզան դիմել են Թիւրքաց սուլթանին՝ խնդրելով թոյլ տալ իրանց բնակվել Թիւրքիայում։ Սուլթանը կատարել է արքայազունների խնդիրքը և մատնացոյց է արել Պօլիսը, որպէս բնակավայր նրանց համար։ Պարսկական գահի վրա որևէ փոփոխութիւն կատարվելու դէպքում, Զաււլ-էս-Սալթանէն, իբրև սահմանադրութեան կողմնակից, պարսկական գահի ամենագլխաւոր թեկնածուներից մէկն է համարվում։

Թաւրիզ, 12 յուլիսի

Յուլիսի 9-ին քաղաքում շարունակվում էր հրացանաձգութիւն չորս թաղերի ֆէդայիների մասնակցութեամբ, որոնք պաշտպանում էին Սաթթար-խանին և գործում էին Դաւաչի Իսլամիէի և կառավարչական հեծեալ զինուորների դէմ։ Միաժամանակ ռմբակոծութեան ենթարկվեց ժամանակաւոր կառավարիչ պրինց Մուխտադիր-ուդ-Դովլէի մասնաւոր տունը։ Շնորհիւ Ռահիմ-խանի վրա հասնող ձիաւորների, յուլիսի 10-ի երեկոյեան վերսկսվեց հրացանաձգութիւնը։ Յուլիսի 11-ին, մօտ կէսօրին, սկսվեց հրացանաձգութիւն։ Կառավարչական ձիաւորները մի կողմից, ֆէդայիները և ամբոխը միւս կողմից կողոպտում են խանութները։ Ի միջի այլոց կողոպտուելուց վնասվեցին, յուլիսի լոյս 10-ի գիշերը, Զինգերի մեքենաների պահեստը և ռուս-պարսկական դպրոցի գոյքը։ Կարգապահ զինուորական ույժի բացակայութեան պատճառով քաղաքում կատարեալ անիշխանութիւն է տիրում, ազգաբնակութիւնը գլուխը կորցրել է, շրջակայ գիւղերից հաց և այլ մթերքներ բերելը դադարել է։ («Հ. Գ.»)

Թէհրանից հեռագրում են «Р. Сл.» լրագրին, որ բացված է դաւադրութիւն շահի, գնդապետ Լեախովի և ռուսահպատակ Շապշալի կեանքի դէմ։

Նրանց պէտք է սպանէին Պարսկաստանում պատրաստված ռումբերով։ Ռումբերի բերելը յանձնել էին հինգ յեղափոխականների, որոնք Աստարայի մօտով պէտք է անցնէին սահմանը կանացի շորեր հագած։ Այդ դաւադրութեանը մեղսակից անձերից երեքը կալանաւորվել են։

Վաղարշապատ, 12 յուլիսի

Ամսիս 9-ին Էջմիածնի միաբանները կաթողիկոսական ընտրութեան առիթով մի յայտարարութիւն են ներկայացրել սինոդին, որի բովանդակութիւնը հետևեալն է.

«Թիւրքահայոց ս. պատրիարքը և արտասահմանի հայ թեմերը մինչև այսօր չեն ստացել նորոգ կաթողիկոսի ընտրութեան թղթերը, թէև դրանք ուղարկված են անցեալ տարվայ դեկտեմբեր ամսի սկիզբներին։ Ի նկատի առնելով թղթերի յապաղումը և կաթողիկոսական ընտրութեան մօտենալը, մենք, Մայր Աթոռի ներքոյ ստորագրող միաբաններս, խնդրում ենք ս. սինոդդ՝ առանց յապաղման ձեռք առնել միջոցներ, որպէսզի ամենայն հայոց հայրապետի ընտրութեան վերաբերեալ թղթերը ըստ կարելւոյն շուտով հասցվեն Թիւրքահայոց ս. պատրիարքին և արտասահմանի հայոց հոգևոր իշխանութիւններին, որպէսզի սրանք էլ հնարաւորութիւն ունենան իրանց վիճակներում ընտրութիւններ անելու և պատգամաւորներին ուղարկելու ս. Էջմիածին այս տարվայ հոկտեմբեր ամսին կայանալիք հայրապետական ընտրութեանը ժամանակցելու համար»։

Ամսիս 5-ին տեղակալը հեռագիր է ստացել Կ. Պօլսի պատրիարքից, որով զեկուցվում է, թէ դեռ ևս դեպարտամենտից ծանուցողական հրովարտակներ չեն ստացվել։ Իսկ ամսիս 7-ին Էջմիածնի սինոդը դիմել է ներքին գործերի մինիստրին, խնդրելով որ որքան հնար է շտապեցնեն թղթերի առաքումը։

Ռ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏ ՈՒՆԿՆԴՐՈՒՀԻՆԵՐԻ ԵՒ ՍԵՄԻՆԱՐԻԱՒԱՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի կարգադրութիւնը ազատ ունկնդրուհիներին համալսարան մտնել թոյլատրելու և սեմինարիաւարտների մուտքը սահմանափակելու մասին առիթ եղաւ այդ հարցը քննութեան ենթարկելու համալսարանների խորհուրդներում։

Օրինակ, «Южн. Край» լրագրի ասելով, Խարկովի համալսարանական խորհուրդը նկատել է, որ դեռ ևս 1907 թւի ապրիլ ամսին ժողով. լուս. նախկին մինիստր Կաուֆմանը բարձրագոյն դպրոցների վարիչների խորհրդակցութեան ժամանակ հետևեալ ղեկավարող ցուցմունքն է տուել.

«Բարձրագոյն դպրոց մտնելու իրաւունք ունեցող բոլոր տղամարդկանց հարկաւոր է, եթէ տեղ կայ, ընդունել ուսանող, իսկ այդպիսի իրաւունք չունեցողներին, իբրև ընդհանուր կանոն, թոյլ չը տալ համալսարան մտնելու. Իսկ իբրև ազատ ունկնդրուհիներ թոյլ տալ միայն կանանց, որովհետև օրէնքով նրանք ուսանողներ լինել չեն կարող»։

Այդ հիման վրա ազատ ունկնդրուհիների ընդունելութիւնը թոյլատրվեց Խարկովի համալսարանում 1907—08 ուսմն. տարին։ Այդ ընդունելութեան օրինական լինելը վաւերացումն ստացաւ մինիստրների խորհրդի մէջ 1907 թւի նոյեմբերի 14-ին։

Այնուհետև Խարկովի համալսարանական խորհուրդը մատնանշում է ազատ ունկնդրուհիների աշխատասիրութիւնը, որ նրանք «ուսանողներից աւելի լաւ են պարապում»։ Այդ պատճառով ազատ ունկնդրուհիները իրաւունք ունէին համարելու իրանց դիրքը համալսարանում ոչ միայն լեգալ, այլ և ապահովված, երաշխաւորված։ Ուստի ժողով. լուս. մինիստրի նոր կարգադրութիւնը չէ կարող վհատեցուցիչ տպաւորութիւն չը թողնել։

Սեմինարիաւարտների ընդունելութեան առիթով Խարկովի համալսարանական խորհուրդը նկատում է, որ մերժելով նրանց ընդունելութիւնը՝ բոլորովին կը դատարկվի պատմական-լեզուագիտական ֆակուլտետը, ուր գլխաւորապէս մտնում են սեմինարիաւարտները, իսկ գիմնազիաւարտները որպէս բացառութիւն, որովհետև այնտեղ մտնելու համար պահանջվում է իմանալ յունարէն լեզուն։

Աչքի առաջ ունենալով այդ ամենը՝ Խարկովի համալսարանական խորհուրդը որոշել է միջնորդել մինիստրի առաջ, որպէսզի 1) թոյլատրվի սեմինարիաւարտներին նախկին հիմունքներով մտնելու համալսարան, գոնէ առաջիկայ ուսումնական տարին, ուշադրութեան առնելով մինիստրի կարգադրութեան ուշ երևան գալը, և 2) թոյլատրել գիմնազիաւարտներին ուսանող մտնելու պատմական-լեզուագիտական ֆակուլտետը, այն պայմանով, որպէսզի նրանցից այնպիսիները, որոնք յունարէն լեզուից թւանշաններ չունենան՝ անցնեն այդ առարկան պարտադիր կերպով համալսարանի երա. մէջ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նոր-Բայազէտ, 8 յուլիսի

Յունիսի 29-ին, կիրակի, հայոց ուսումնարանում ծխական ժողով կար, որ հրաւիրել էր նոյն ուսումնարանի հոգաբարձութիւնը։ Զբաղմունքի առարկաներն էին. 1) դպրոցի անցեալ ուսումնական տարվայ բիւջէն և պարտքերը. 2) առաջիկայ ուսում. տարվայ նախահաշւի խնդիրը. 3) դպրոցի ապահովութեան հարցը և 4) օրիորդաց 5-րդ բաժանմունք բացելու խնդիրը։ Ժողովը, նախագահ ընտրելով պ. Ստ. Բասիլեանցին և քարտուղար պ. Ն. Հայրապետեանցին, անցաւ օրակարգի խնդիրների քննութեան։ Բայց նախքան բուն հարցերի մասին խօսելը, ժողովականների մի մասը սկսեց միւս մասի դէմ անձնական վիրաւորանք, կամ կուսակցական դաւանանք, թայֆայականութեան և անձնական հաճոյակամութիւն նոյնիսկ ուսուցիչների վարմունքի մէջ և այլն և այլն։ Մի խօսքով աղմուկներ, զրպարտութիւններ և վիրաւորանքների մի տարափ էր, որ թափում էր մէկը միւսի գլխին։

Թէպէտ ժողովը բաղկացած էր գլխաւորապէս ինտելիգենցիայից (ներկայ էր նաև հնախոյզ պ. Ե. Լալայեան), բայց ցաւօք սրտի պէտք է յիշեմ, որ դա հասարակութեան բանիմաց դասակարգի ժողովի տպաւորութիւն չը թողեց, այլ աւելի շուտ այդ ժողովը անձնական կռիւների և խականութեան մի հաւաքածու էր, որտեղ ամեն ոք իր սրտի մաղձն էր թափում իր ընդդիմադիր թայֆայականի հասցէին։ Եւ գիտէք ինչ է դուրս գալիս դրանից. այն, որ ապագայի այն հաստատութիւնը, որի ծով կարիքների մասին պէտք է ժողովը իր պարզ և որոշ եզրակացութիւնը դուրս բերէր, տուժում է, գործը աւելի խճճվում և հեղհեղուկ քայքայման վտանգին ենթարկվում... Սակայն դուցէ դեռ երկար «իրար խախից» բռնէին մեր պարոն ինտելիգենտները, եթէ նախագահը նրանց բոլորին էլ չը զրկէր խօսքից, որ չէր վերաբերում օրվայ հարցերին։

Առաջին հարցի մասին զեկուցելով հոգաբարձու պ. Գ. Բուդուրեան մի առ մի թւեց անցեալ ուսումն. տարվայ դպրոցական մուտքը, որը 4000-ից էլ պակաս էր։ Ապա ցոյց տալով ընդհանուր ելքը, երևաց, որ դպրոցը դեֆիցիտ ունի 900 րուբլի։ Եթէ այս գումարի վրա աւելացնենք 5-րդ բաժանմունքի վրա ծախսվելիք գումարը, որ ժողովը ընդունեց ուրախութեամբ, և գալոց տարվայ դեֆիցիտը, պ. Բուդուրեանի հաշւով պէտք կը լինի մօտ 2000 րուբլի աւելորդ մի գումար, որ, դպրոցի սովորական մուտքից դուրս, ժողովը պէտք է միջոց գտնի հայթայթելու։ Եւ ահա այդ բացը ծածկելու համար ժողովը ցանկութիւն յայտնելով թոշակը—ուսման վարձը—մի քանի կատեգօրիայի (փոխանակ 6 ր.) բաժանելու՝ բաւական «չանս ծեծելուց» յետոյ՝ ոչ մի շօշափելի արդիւնքի չը հասաւ։ Ուսման թոշակը մի քանի կատեգօրիաների, այն է պրոգրեսիվ կերպով բաժանելու համար շատ էին տենչում մանաւանդ օպպօզիցիոն կուսակցական մարդիկ կամ հակառակ թայֆայականները, որոնք թէև իրանք էլ լաւ են հասկանում դրա անպաստաւոր լինելը՝ դպրոցի բիւջէն աւելացնելու գործում, սակայն նրանք գրեթէ ցանկանում են, որ գործը խանգարվի, հոգաբարձութիւնը տուժի, որպէսզի ապագայում մեղադրեն դպրոցի վարչութեան (որի կազմում չը մտան իրանց մարդիկը), թէ ոչինչ չարեց, ձեռք գործ չը դրեց կողմնակի աղբիւրներ գտնելու, դպրոցի նիւթականը բարձրացնելու և այլն։ Վերջ ի վերջոյ, իբրև ցանկութիւն, ժողովում ընդունվեց ի նկատի ունենալ ապագայում ուսման վարձը մի քանի կատեգօրիայի բաժանելու մասին, թէև մեզանում առաջին տարիներում թոշակը բաժանված է եղել պրոգրեսիվ կերպով, բայց դպրոցի վարչութիւնը միշտ կռիւ ղալմաղալի մէջ է եղել ծնողների հետ՝ ուսման վարձը ստանալիս, քանի որ ոչ մի ընտանիք չէ համաձայնում միւսից աւելի վճարել։

Ինչ վերաբերում է դպրոցի դեֆիցիտը ծածկելուն և գալոց ուսում. տարվայ բիւջէն լրացնելուն, ժողովը որոշեց նորից հասարակական տուրք սահմանել 1909 թ. համար 1000 րուբլի մի գումար, ինչպէս եղել է այդ 1907 և 1908 թւերի համար, և որը բաժանվել է (1907 թ.) պրոգրեսիվ կերպով՝ ըստ կարողութեան, թէև մի մասը չէ հաւաքվել հասարակութիւնից՝ կարկտի աւերքի պատճառով։

Դպրոցի ապահովութեան հարցի մասին վիճելիս ժողովականները մի որոշ եզրակացութեան չեկան. ոմանք առաջարկեցին հաս. խոտատեղիները ծախել և ապահովել ուսումնարանը, ոմանք անիրագործելի գտան այդ բանը, ծխական ժողովի իրաւասութիւնից դուրս համարելով այդ բանը։ Իսկ ոմանք առաջարկեցին գնել արքունական «ուչ-ուլիքլու» խոտատեղը, որը գնել է գիւղատնտես պ. Ա. Զարգար-Նիկողոսեանց և կապալով տալով անասնապահներին, աւելորդ արդիւնքը յատկացնել դպրոցին, և այլ այսպիսի կողմնակի եկամուտներ, որոնց այստեղ տեղը չէ յիշելու։ Բայց թէ ինչ միջոցներով պէտք է ձեռք բերվեն այդ եկամուտները, ժողովը դրա համար ընտրեց 7 հոգուց բաղկացած մի մասնաժողով, որը ապագայում պէտք է հոգ տանի այդ հանգամանքների մասին։ Իսկ առ այժմ թողնվեց քաղաքային աւագի տրամադրութեան, որպէսզի հասարակական ժողով գումարի և այս ծխական ժողովում ծեծված հարցը հաս. առաջ դնելով, մի հազար րուբլու տուրք սահմանի գալոց տարվայ համար՝ յօգուտ ծխական դպրոցի։

Որսորդ

Լագօդաղ, 11 յուլիսի

Անցեալ կիրակի տեղիս հայոց դպրոցում, յօգուտ Կովկասի հայոց բարեգ. ընկ. Լագօդաղի ճիւղի, տեղի ունեցաւ երեկոյթ, որը զուտ արդիւնք տուեց 24 ր.։

Անցեալներն այստեղ եկաւ Ամօ-Խարազեանի խումբը և տուեց մի ներկայացում հայոց դպրոցում։ Ներկայացրին «Թագի համար» ողբերգութիւնից երեք արարուած։ Խումբն ապա ուղևորվեց Զաքաթալա՝ այնտեղ էլ ներկայացումներ տալու.

N. N.

ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

(Նամակ խմբագրութեան)

Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւններով զբաղողների և մանաւանդ հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը ես հրաւիրում եմ հետևեալ կարծիքի վրա։

Գոյութիւն ունի երկու կանոնադրութիւն՝ մէկը Մատթէոս կաթողիկոսի օրով հաստասխան կանոնադրութիւնը, միւսը 1905 թ. Փոխարքայի հաստատած կանոնադրութիւնը։

Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնը ո՞ր կանոններով պէտք է կատարվի. հի՞ն թէ նոր։

Պէտք է վճռել այս սկզբունքային խնդիրը։

Եթէ հին կանոններով պէտք է կատարել, այն ժամանակ երկու տարի առաջ կատարած ընտրութիւնները պէտք է համարել ապօրինի, իբրև սխալմամբ նոր կանոններով կատարած և պէտք է նորից ձեռնարկել 12 հոգաբարձուների ընտրութեան՝ հին կանոնների հիման վրա նոր ծխական ժողովներ հրաւիրելով։

Իսկ եթէ նոր կանոններով պէտք է կատարել, ուրեմն հին կանոնները պէտք է համարել ջնջված և միանգամայն իր թէ ամբողջ և թէ մասնակի ոյժը կորցրած։

Ս. Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մօտ օրերս Թիֆլիս է գալու անգլիական կապիտալիստների ներկայացուցիչը քաղաքային վարչութեան հետ բանակցութիւն վարելու դումայի թոյլատրած 2,500,000 ր. փոխառութեան վերաբերմամբ։ Նա Ռուսաստան է գալիս անգլիական դեսպանի հետ միասին։

◆ Կովկասի Փոխարքան կազմել է մի յատուկ մասնաժողով վառօդի պահեստները քաղաքի սահմաններից դուրս տեղափոխելու հարցը քննելու համար։ Արտիլերիական պահեստների կառավարիչը հաղորդելով այդ մասին քաղաքային վարչութեանը՝ խնդրել է քաղաքի կողմից ներկայացուցիչ նշանակել մասնակցելու այդ մասնաժողովին։ Վարչութիւնը իր կողմից ներկայացուցիչ է նշանակել վարչութեան անդամ իշխ. Գ. Ե. Արղութեան-Երկայնաբազուկին։

◆ Քաղաքային վարչութիւնը ձեռնարկել է քաղաքի նոր պլանը կազմելու, մտցնելով նրա մէջ նաև վերջին տարիներս շինված մայրամասերը, Բեհբուդեանի, Միրզոյեանների, Մակարեանների, Վակէի և հայոց սեմինարիայի հողերը։ Այդ նոր պլանը պատրաստ կը լինի չորս ամսից յետոյ։

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն հաստատել է Ս. Գ. Եղիազարեանին Հաւլաբարի տղայոց պրոգիմնազիայի պատուաւոր հոգաբարձուի պաշտօնում։

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ «Голосъ Кавказа» լրագրի խմբագիր Իօսիֆ Պլատոնովիչ Բոգօմօլովը 1907 թւի յուլիսի 4-ի պարտադիր որոշումը խախտելու համար ենթարկված է 200 ռուբլի տուգանքի. վճարելու անկարողութեան դէպքում՝ մի ամսվայ բանտարկութեամբ է փոխարինվում տուգանքը։

◆ Թիֆլիսի նահանգապետի՝ ընկերութիւնների վերաբերեալ կազմված ատեանի օրագրի որոշման համաձայն յունիսի 30-ից փակվել է Թիֆլիսի բաղանիքների բանուորների արհեստակցական ընկերութիւնը։

◆ Բագուի հայոց կուլտուրական միութիւնը մի յայտարարութեամբ յայտնում է հասարակութեանը, որ ինքը այս տարվայ ապրիլի 1-ից Նոր-Շէն գիւղում բացել է մի հիւանդանոց մշտական մահճակալներով ծանր և խրոնիկ հիւանդների համար։ Այդ ձեռնարկը գլուխ բերելու համար՝ օժանդակել են Նոր-Շէնի, Կաղարծիի, Հացիի, Աւգուսի, Միսրիշէնի և Աշանի բագուաբնակ գիւղացիները։ Հիւանդանոցի բժշկական խումբը կազմված է մի բժշկից, մի մանկաբարձուհուց և մի ֆելդշերից։ Բացի ծաղիկ պատուաստելը, որը կատարվում է ձրիաբար, մնացեալ հիւանդութիւնները բժշկվում են վճարով։ Հիւանդանոցը որոշված է տեղափոխել Կաղարծի, որը աւելի կենտրոնական մի վայր է, եթէ, սակայն, շրջակայ բնակչութիւնն օժանդակութիւն ցոյց տայ տեղափոխման այդ գործին։ Հակառակ դէպքում հիւանդանոցի գոյութիւնը երկարատև չէ կարող լինել։

◆ Մօտ ժամանակներս քաղաքային վարչութիւնը կը սկսի սալայատակել տալ Նախալօվկայի Ռուստավելսկայա և Աֆանասիևսկայա փողոցները։ Թէ որքան այժմ էժանացել են սալայատակելու աշխատանքները, շնորհիւ անգործութեան, երևում է նրանից, որ Հաւլաբարի Պետրոպաւլովսկայա փողոցի սալայատակելը աճուրդով տրված է քառակուսի սաժէնը 1 ր. 71 կոպէկով, մինչդեռ առաջներում նոյն աշխատանքների համար քաղաքը վճարում էր 3 ր. 50 կոպէկ։

◆ Քաղաքի 7-րդ և 8-րդ ոստիկանամասերի տնատէրերն ու բնակիչները հաւաքական խնդիրք են ներկայացրել Թիֆլիսի նահանգապետին, որտեղ յայտնում են, որ քաղաքային վարչութիւնը փակել է ս. Կարապետեան ձորում, 7-րդ և 8-րդ ոստիկանամասերի միջև գտնվող՝ ջուր մատակարարող կրանը, պատճառաբանելով որ նա օգուտ չէ բերում քաղաքին։ Դրա շնորհիւ խնդրատուները մնացել են առանց ջրի, որովհետև ջրկիրները հեռաւորութեան պատճառով հրաժարվում են գնալ ուրիշ կրաններից ջուր բերել, իսկ Կուրի ջուր գործածելը, իբրև վտանգաւոր, արգելված է։ Այդ հանգամանքը ի նկատի առնելով խնդրատուները խնդրում են նահանգապետին կարգադրել այդ փակված ջրի կրանը բանալու մասին։

◆ Գաւառական ոստիկանութիւնը կալանաւորել է Աղամօվկա և Կօջլիսի գիւղերի նախկին պահակներ Թեվդորո Շալիշվիլուն և Հաջի Խալիլ Մամեդ-օղլուն, որոնք մեղադրվում են Իօրիօնի կամուրջի մօտ Կախեթիայի խճուղու վրա անցնող արաբաներն ու օմնիբուսները կողոպտելու գործում։ Կողոպտված իրերի մի մասը գտնված է կալանաւորների մօտ։

◆ Ժամանակաւոր գեներալ-նահանգապետի որոշմամբ Օլգինսկայա փողոցի №№ 54, 51 և 46 տների դռնապաններ՝ Նիկոլայ Բիրաշվիլին, Կօսօ-Մամօ-օղլի և Իսադուլլահ Սայֆերդին-օղլին պարտադիր որոշումները խախտելու համար ենթարկված են իւրաքանչիւրը երեք ամսվայ բանտարկութեան։

◆ Ի նկատի առնելով լրագիրների մէջ լոյս տեսած այն լուրը, որ, իբր թէ, 10-րդ քաղաքամասում Խրիստովսկայա փողոցում մտադրութիւն կայ բանալ հասարակաց տուն, 9-րդ և 10-րդ ոստիկանամասերի պրիստաւները յայտնել են Աւճալեան, Խրիստովսկայա, Կրօչնայա, Ախալցխայի և Անտոնովսկայա ու նրան կից փողոցների տնատէրերին ու բնակիչներին, որ յիշեալ շրջանում և առհասարակ 9-րդ և 10-րդ քաղաքամասերում, որտեղ զինուորական մասերն ու շտաբի վարչութիւններն են մնում, չի թոյլատրվի հասարակական տներ բանալ և այդ մասին հարց էլ չէ յարուցվել։

◆ Խմբագրութիւնս ստացել է հետևեալ գրքերը. 1) «Անիւ» գրադարանի № 1 հրատարակութիւնը «Վերագնահատումներ» վերնագրով, գինն է մէկ ռուբլի. 2) Յակ. Աղաբաբի «Մանկական Ալբոմը», փունջ երկրորդ, պատկերազարդ պատմուածքներ և ոտանաւորներ։ Գինն է 20 կոպէկ։

◆ Յուլիսի 12-ին նահանգապետը առաջարկել է քաղաքագլխին քաղաքային զինուորական վարչութեան ծառայողների կազմից արձակել Խախանովին։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ «Голосъ Томска» լրագրին հաղորդում են, որ սիբիրեան երկաթուղու Կրասնօեարսկ կայարանում երևան է հանված 400,000 ր. արժողութեամբ շինարարական նիւթերի վատնում։

◆ Վարշավայի ոստիկանութեանը երկար ժամանակ չէր աջողվում գտնել գեներալ-նահանգապետ Սկալօնի կեանքի դէմ մահափորձ անողներին։ Վերջին ժամանակներս այդ բանում կասկածվելու համար կալանաւորվել էին երկու աղջիկ՝ Սոֆիա Օվչարեօկ և նրա ընկերուհին՝ Օստրօվսկայա, որոնց դէմ թէև լուրջ մեղադրանքներ կային, բայց նրանք բոլորովին ժխտում էին իրանց մեղսակցութիւնը։ Հարցաքննութիւններից մէկի ժամանակ առաջարկեցին Օվչարեօկին ընտրել իր համար պաշտպան, և նա ընտրեց երդ.-հաւատ. Պասեկին, որ Վարշավայի յայտնի պաշտպաններից մէկն է։ Օվչարեօկը անձամբ չէր ճանաչում Պասեկին և այս հանգամանքից օգտվեց ոստիկանութիւնը։ Մի քանի օրից յետոյ ոստիկանական գործակալը Պասեկի օգնականը ձևանալով ներկայանում է կալանաւորին և բացատրելով որ պատրոնը հիւանդ լինելով հազիւ թէ կարող լինի անձամբ պաշտպանել նրան, ուստի առաջարկում է իր ծառայութիւնները։ Օվչարեօկը համաձայնվում է և պատմում է մանրամասնօրէն իր մասնակցութիւնը մահափորձում. ասում է թէ ով է ռումբ նետողը, ընկերները և այլն։ Նոյն իսկ գրաւոր կերպով Օվչարեօկը նամակ է գրել Պասեկի անունով։ Դատարանը անվիճելի փաստերի հիման վրա երկու յանցաւոր կանանց դատապարտել է մահվան, կախաղանի միջոցով, որը յետոյ փոխարինված է 15 տարվայ տաժանակիր աշխատանքների։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏՆՈՒԹԵՆԷՆ ՎԵՐՋ

Վանայ մէջ դէպքերը աներևակայելի ուժգնութեամբ մը գահավէժ իրարու յաջորդեցին։ Դհերցի Դաւօյի մատնութիւնը լոկ սկիզբը մը և կրակը դարձաւ հրդեհի մը, որ կը սպառնայ մեր տարաբաղդ ծննդավայրը և շէնաց Վան քարուքանդ ընել, հայերէ ամայացնել։ Մահմեդական տարրը և Թիւրք կառավարութիւնը համաձայն և համակամ լաւագոյն առիթը գտած ըլլալ կը թուին իրենց դժոխային գաղափարները—հայաջինջ քաղաքականութեան—անողոքաբար առաջ տանելու։

Չենք խօսիր, կատակի ալ սիրտ չկայ դժբաղդաբար, հայապաշտպան երիտասարդ Թիւրքերու զգացմանց մասին, որոնց գոյութիւնը թռուցիկներէ և այս ու այն դաշնակցական թերթերու մէջ կարդալէ զատ ուրիշ կերպով չիմացանք։ Վասպուրականի հայութիւնը, պաշարուած ամենուստ, անօթի, ծարաւ կը կոտորուի սրով և անսուր. ահա իրողութիւնը։ Իսկ իրենց «կոնակով» հայ հայրենակիցը պաշտպանել պոռացող «ընկեր» և «քաղաքացի» Թիւրքերը տեղերնէն շարժած չունին այն գերագոյն պատճառով, որ գոյութիւն ունեցած չեն։

Մինչ այս մինչ այն Վանի հայերը օրհասական, տագնապալի կացութեան մը հանդէպ կը գտնուին, որ այլևս պարտկել հնար չէ։ Եւրօպական մամուլը և հեռագրական գործակալութիւնը ատենէ մը ի վեր ուրիշ գործ չունին, քան եթէ մեր անձկալի ծննդավայրին դժբաղդութեանց պաշտօնական պաղ արձագանքը ըլլալ։ Բոլոր զէնքերը կառավարութեան ձեռքն անցած են և այժմ հայ տարրը քիւրդ և Թիւրք արիւնարբուներու դէմ և ոչ իսկ ինքնապաշտպանութեան հասարակ միջոց մ'ունի։

Տխուր գոյժերը կը հաստատեն, որ ներկայ յուսահատ կացութեան մէջ Վանայ հասարակութիւնը,—ըլլայ երկիւղէն, ըլլայ ճնշումէն և... ըլլայ իր դժբաղդութիւնը շահագործող սուտանուն գործիչներու դէմ զզուանքէ մը,—մատնիչ դառնալ սկսած է։

Տխուր է և պարզապէս յուսահատական արձանագրել այս երևոյթը, ինչպէս որ կսկծալի է աչքի առաջ բերել այն անելի կացութիւնը, որուն մղուած ակամայ ինկան մեր տարաբաղդ եղբայրները։

Վտանգը մեծ է ամեն տեսակէտով. վիճակնիս ծանր և փափուկ։ Ամենուս պարտականութիւնն է այլևս առանց այլ և այլի, առանց ձգձգումներու և շեղ նկատումներու՝ աշխատիլ միաբան մեր հայրենեաց ցաւերն ամոքման։ Դանդաղութիւնը, անտարբերութիւնը գուցէ վերջին մահացու հարուածը ըլլայ և վաղը այլևս ուշ.... Պէտք է, անհրաժեշտօրէն պահանջ մըն է նիւթական օգնութիւններով անոնց ապրելու միջոց ընծայել, սիրտ ու հոգի ներշնչել, որպէսզի կարենան տոկալ մինչև որ մրրիկը անցնի *)։

Ասիկա սակայն թող մեզ չարգիլէ—և քաղաքական սխալ մը պիտի ըլլար լռանցելը—քննելու և երևան բերելու Վասպուրականի վերջին անցքերուն ճշգրիտ պատճառները, համազգային այս աղէտին ճշմարիտ պատասխանատուները։ Ասիկա ընելու է կուսակցական շահերէ և նկատումներէ հեռու լոկ ազգին վիճակին բարւօքման, բացարձակապէս անոր շահերուն տեսակէտով, որուն առաջ—թող մեզ թոյլատրուի հաւատալ գոնէ—գլուխ պիտի ծռեն կուսակցութիւններն ալ, կուսակցական ուրոյն նկատումներն ալ։

Դաշնակցական թերթերը շատ լուրջի չառին Վանայ արիւնոտ դէպքերուն պատճառները։ Լուրջի չառին կըսենք, այսինքն լուրջ հանգամանք մը ընծայել չուզեցին դիտմամբ, որպէս թէ եղածները պարզ և անխուսափելի դիպուածի արդիւնք ըլլային և մեր սիրելի ծննդավայրը՝ ուր մեր սիրելիքը հոգեվարք կը տառապին և մահու ու կեանքի օրհասական ցաւը կանցնին՝ պատահական և աննախատեսելի դժբաղդութեան մը զոհն ըլլար լոկ։ Զրոյն նոյնպէս որ Թիւրք բռնապետութիւնը արդէն կազմ պատրաստ առիթի կը սպասէր և անցած դարձածները անոր ծրագրած և դժոխային մեքենայութեանց հետևանքներն եղան։

Անշուշտ ոչ ոքի մտքէն կանցնի ըսելու թէ Թիւրքը հայուն ջնջումը ծրագրած չէ, թէ մեր գլխուն վրայ յայտնի դարանի կեցած առիթի չի սպասեր։ Դժբաղդաբար ասոնք ճիշտ են և արևէ աւելի սև կարմիր իրողութիւններ, որոնց սկիզբը ոչ այսօր պէտք է փնտռել և ոչ երէկ։ Գործը միմիայն Թիւրքին վզին փաթթելով մէջէն ելլելը նոյն այդ տարաբաղդ ժողովրդեան վիճակին հանդէպ անողոք հեգնանք մը չէ՞ նշանակեր։

— Մատնիչ Դաւօն իր հայրենիքը աւերելու կատաղութենէն բռնուած ինքնաբերաբա՞ր և կամ Թիւրքէն կաշառուած ըրաւ այդ անլուր հրէշութիւնը։ Ինչո՞ւ Արդեօք նոյնքան և աւելի յանցաւոր չէ՞ն անոնք, որ այդ տգէտ, բայց անուրանալիօրէն նուիրուած կռուող ոյժը յուսահատեցուցած այդ անտակ անկումին գլորեցին։

Ասիկա անգամ մը ևս չի՞ նշանակեր և չի՞ ապացուցաներ այն խորարմատ թերութիւնները, կազմակերպական զանցառութիւնը, աններելի տգիտութիւնը, աննախատեսութիւնը և նոյնիսկ փտութիւնը, որ մեր ամենէն աւելի հզօր կարծուած քաղաքական կուսակցութեանը և կամ ըստ իրենց՝ «հայրենեաց պաշտպան» կազմակերպութեանը կազմին մէջ բոյն դրած, անոր մաքրումին, նորոգութեան և գրեթէ արմատական յեղաշրջութեան անյետաձգելիօրէն պէտքը կը հնչեցնեն, եթէ երբեք ասիկա՝ գէթ այս տխուր և գերագոյն պարագային՝ պիտի ներէ կուսակցական հպարտութիւնը և ինքնասիրութիւնը։

Արդեօք հրապարակաւ կարելի չէ՞ հարցնել.

— Իրա՞ւ է որ մատնութենէն դեռ շատ առաջներ արևելեան բիւրօն Վանայ տեղական դաշնակցականներէն խիստ բողոքներ ստացած ըլլայ իր առաքեալ ներկայացուցիչներուն վարք ու բարքէն առաջացած գայթակղութեանց մասին. բայց սակայն վանցիներէ, կռօներէ՝ թէև դաշնակցական՝ եղած ըլլալուն և ոչ իսկ նկատողութեան առնուեցան, մինչև որ... խնդիրը այս վիճակին հասաւ։

Յամենայն դէպս անկարելի է ընդունիլ որ Դաւօն ինքնին լոկ մատնելու, աւերելու և երկիրը արիւնոտելու կրքէն, այսպէս ընելու դիւային հաճոյքէն մղուած և կամ կառավարական դրամէն շլացած՝ այդ միջոցին դիմած ըլլայ։ Ո՛չ, ո՛չ, պէտք է լուսաբանուիլ։

Դաշնակցութիւնը՝ որուն կարգերէն ելաւ այդ հրէշը՝ ընելու է այս լուսաբանութիւնը, նոյնիսկ իր պատւոյն և կազմակերպութեան մաքրութեան գաղափարէն տոգորուած։ Ապա թէ ոչ, լռութիւնը մեզ պիտի ստիպէ հաւատալու որ, եթէ իր պետերուն անվայել ընթացքէն մղուած վստահելի, անձնուէր (անձով և դրամով, ըստ որում Դաւօյի հայրը բարեկեցիկ անձնաւորութիւն մ'էր Վանայ մէջ և դաշնակցական առաքեալները մտած չեն անշուշտ անոնց տանը մէջ իրենց վայելած անվերջ հիւրասիրութիւնը), բայց տգէտ զինուորը այդ անելի և մեր ժամանակակից կարմիր պատմութեան ընթացքին մէջն իսկ անօրինակ մատնութեամբը երկիրը կործման դուռը հասուց և ինքնապաշտպանութեան համար տարիներով համբարուած ոյժերը վայրկեանի մը մէջ թշնամւոյ ձեռքը տուաւ, այնպէս ալ դաշնակցական վարիչները պատճառներ ունին Դաւօյին այդ անկման պատճառ եղողներուն ետևը չիյնալ... վախնալով որ շահակցական կապերով կապկպուն այդ առաքեալներն ալ իրենց կարգին «յայտնութիւններով» ամբողջ կազմակերպութիւնը Վասպուրականի վիճակին հասցնեն։

Մաղթենք որ իրողութիւնը մեր ըսածին հակառակն ըլլայ և հայու ողջմտութիւնը ի վերջոյ յաղթող հանդիսանայ։ Մեր նպատակը առիթէն օգտուելով ոչ գաղափարակից կուսակցութիւն մը հարուածել չէ (և դժբաղդաբար աղէտը շատ մեծ է որպէսզի սիրտ ունենայինք երկրորդական խնդիրներով զբաղելու), այլ գործուած սխալը ճանչնալ, զայն դարմանել և անկէ հարկաւոր դասը քաղել ուզելն է։

Սխալիլը և սխալներ գործելը գործող գործունէութեանց անբաժան թերութիւններ են դժբաղդաբար. չսխալելու լաւագոյն միջոցը՝ ինչպէս կըսեն՝ բնաւ չգործելն է։ Եւ սխալիլը նուազ յանցանք մ'է, բայց յամառիլ զայն տեսնելը և ընդունելը, ջանալ զայն վարագուրել, ահա ինչ որ գիտակից մեղսակցութիւն մը և դաւաճանութիւն մը պիտի նկատուէր։

Մին

Կահիրէ, 8 յուլիս (ն. տ.)

---

*) Եգիպտաբնակ վասպուրականցիներու խնդրանաց վրա, Կահիրէի ազգային առաջնորդարանը այս նպատակով մասնաւոր հանգանակութեան ձեռնարկած է արդէն, և յուսալի է որ ուրիշ գաղութներ ևս Կահիրէի օրինակի հետևին։ Ծ. Յ.

ՖՐԱՆՍԻԱՑԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԸ

Պարիզ, 14 յուլիսի (ն. տ.)

Դեռ ամսիս 10-ից Պարիզի կեանքը սովորականից սկսեց փոխվել. ժողովրդի մէջ կեանքը սկսեց եռալ. քաղաքային վարչութիւնները (Պարիզը տասնեակներ քաղաքային վարչ. ունի) տենդային աշխատանքներ սկսեցին գործ դնել, որպէսզի որքան կարելի է շուքով կատարեն տօնը—յուլիսի 14-ը—որի պատմական նշանակութեանը ֆրանսիացին աւելի մեծ նշանակութիւն է տալիս, քան հայերս զատկական կամ ծննդեան տօներին։

Նախ քան հանդէսների ու զարդարանքների համառօտ նկարագիրը, աւելորդ չեմ համարում թռուցիկ կերպով ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին այդ տօնի պատմական նշանակութեան հետ։

Հայկական կեանքի նոր սերունդը, ինչպէս շատ անգամ է ինձ պատահել լսել, ֆրանսիական յեղափոխական կեանքի պատմական անցեալի հետ հարկաւոր ծանօթութիւնը չունի. Նա կարծում է, որ Ֆրանսիան յեղ. շրջանի մէջ մտաւ 1870—71 թ. թ. ֆրանս.-պրուսական պատերազմի ժամանակ, երբ վերջին Նապոլէօնական գահը ու պալատը գերմանական ռումբերի տակ ջարդվեց, Նապոլէօնը գերվեց և այլն և այլն։ Ոչ, ընթերցող, դարեր առաջ առաջինը Ֆրանսիան է եղել մարտնչողը, ազատութեան կոչնակ հնչեցնողը, մարդկային երակներից հոսող արիւնից լիճ ստեղծողը և բռնութեան դէմ ոչ մի սրբութիւն չը խնայողը։

Պարիզի փողոցները, բազմաթիւ հրապարակները, հասարակական և ազգային շէնքերի տանիքները ու բակերը, պալատների պատերը լիքն են հազարաւոր գործիչների արձաններով, որոնց մէջ աչքի է ընկնում կենսագրականով մեզ ծանօթ Օրլէանի կոյսը՝ դրօշակը ձեռին։ Այդ հայրենասէր կոյսի արձանը երախտագէտ Ֆրանսիացին մի քանի հրապարակներում ունի ի ցոյց դրած։

Յուլիսի 14-ի տօնը յիշատակ է այն չը տեսնված շարժման, որը տեղի ունեցաւ 1789 թ. Պարիզի Բաստիլ բերդի առաջ, ուր միապետները տանջանքի էին ենթարկում քաղաքական գործիչներին, յեղափոխականներին։

Ֆրանսիացին մի շարք բռնակալ միապետների ձեռին խիստ զրկանքներ կրելուց և մի շարք յեղափոխական ցոյցեր, շարժումներ անելուց յետոյ՝ երբ համբերութեան բաժակը միայն Լուդովիկոս 16-դի օրով լցվեց, այլ ևս ֆրանսիացին չը կարողացաւ տանել։ Պարիզի բնակիչները Մարսէյլ քաղաքից օգնութեան հասնող զօրաբանակի օգնութեամբ «մարսէլեզ» երգելով սկսեցին զինեալ պայքարը։ Նախ Լուդովիկոսին պալատից դուրս են քշում, բերդի առաջ գլխատում, ապա ազատելով բոլոր քաղաքական բանտարկեալներին Բաստիլ անխորտակելի ու սարսուռ ազդող բերդից՝ հիմնատակ կործանում են բերդը։ Սկսվում է սարսափելի եղբայրասպան կոտորածը՝ միապետական, արքայական, արմատական, կղերական, հասարակապետական, սահմանադրական և այլն և այլն կուսակցութիւնների միջև։

Ահա այդ օրվայ նշանակութիւնն է, որ ամբողջ Ֆրանսիան այսօր տօնում է 119-դ տարեդարձը։

Հանդէսին ներկայ լինելու համար, երկրի զանազան ծայրերից հարիւր հազարաւոր ժողովրդից զատ, Անգլիայից, Գերմանիայից և արտասահմանեան այլ և այլ վայրերից եկել էին բաւական մարդիկ, օտարազգիներ։

Փողոցները զարդարված էին ազգային դրօշակներով, կամարներով. տների լուսամուտները՝ գոյնզգոյն ապակեայ էլեքտրական լապտերներով։

Հարիւրաւոր հրապարակներում նուագում էին երաժշտական խմբերը հասարակապետութեան կարգադրութեամբ, իսկ իւրաքանչիւր թաղի բնակիչ հանդիսին աւելի շուք տալու համար ունէր իր երաժշտական խումբը։ Բացի այդ, հիւրանոցները, ճաշարանները և կօֆէ-շանտանները առանձին-առանձին նուագողների խմբեր, որպէսզի յաճախորդներ շատ ունենան։

Պարիզը սքանչելի էր։

Երեկոյեան ժամը 6-ից ամբողջ Պարիզը ոտքի էր կանգնած։ Երիտասարդները, օրիորդները, ծեր մարդիկ ու պառաւ կանայք նուագողների շուրջը ուրախ-ուրախ պտոյտներ անելով թևանցուկ պարում էին հրապարակներում ու փողոցներում։

Իւրաքանչիւր վայրկեան 20—30 անգամ պայթումներ էին լսվում. պատանիները ուժանակի ու վառօդի ձայնով օդը թնդեցնում էին։ Հայ-Թուրքական կոտորածն էր յիշեցնում մեզ։

Ուսանողները և ուսանողուհիները խումբ-խումբ շղթայ կապած երգում էին փողոցներում։ Փողոցների էլեքտրաքարշ և ձիաքարշ երկաթուղիները քաղաքի կողմից դադարեցված էին։ Գիշերը, ժամը 10-ին, լսվեց մի սոսկալի պայթում. կարծես ականջիս տակ ռումբ պայթեց, և եթէ մօտս կանգնած երեխաներից ու կանանցից ամօթ չը քաշէի, վազէ վազ փախուստ կատարել կը լինէի։ Այդ պայթումը պաշտօնական ազդանշանն էր։

Չափազանց թոյլ եմ զգում ինձ նկարագրել Պարիզի այդ գիշերվայ երկինքը... Մենք կանգնած էինք հասարակապետութեան տան առաջ, որի շուրջն են գտնվում մի շարք համալսարաններ, առևտրի մինիստրութեան և արդարադատութեան պալատի շէնքերը։

Ազդանշանից յետոյ քաղաքի երկու կողմերից սկսվեց ռմբակոծումը՝ հերթով։ Նախ հազարաւոր խլացուցիչ պայթումներ լսվեցին, ապա պատկերը փոխվեց։ Երկնքում սկսեցին երևալ գոյնզգոյն աստղեր, օդապարիկ. կապոյտ երկինքը փոխվեց կարմիրի, կանաչ և դեղին գոյնի։ Հանդիսականները շուարված չէին հասկանում երկնքի ո՞ր կողմին նայեն, որ կարող լինեն ամբողջ տեսարանը դիտել։ Երկու ժամ այդ սքանչելի տեսարանները դիտելուց յետոյ, երկնքի երեսին տեղի ունեցաւ կատարեալ պատերազմ։ Երկու դիրքերից դէպի երկինք էին արձակվում վառ գնդակներ, որոնք սլանալով օդի մէջ նախ պայթում էին սոսկալի ոյժով, ապա ամեն մի գնդակ բաժանվում էր 10—20 խնձորի չափ գնդակների ու իրար ետևից պայթելով կրակի հեղեղ էր թափում դէպի ներքև։ Դա կարծես մի տեսակ ցոյց էր, որով ցոյց էին տալիս, թէ ինչպիսի հսկայական քայլերով է առաջադիմել տեխնիկան Ֆրանսիայում և թէ ինչպիսի սոսկալի հետևանքներ կարող է ունենալ ապագայ պատերազմը մարդ կոչված արարածների համար…

Մեծ ջանք էր գործ դրված ազգային բոլոր շէնքերի ու հաստատութիւնների վրա, ինչպիսին են հասարակապետութեան, համալսարանների, թանգարանների, մուզէյների, կենդանաբանական այգիների, հնագիտութեան և այլ շէնքերի զարդարման վրա։ Եթէ Պարիզի ազգային և հասարակական շէնքերը ի մի գումարելու լինենք, Բագու քաղաքի չափ տեղ կը բռնէ. բայց թէ ինչպիսի ճաշակով էին զարդարված այդ շէնքերը այդ օրը, ինչպիսի էլեքտրական ճրագներով շինված տառերով էին կենսագրական ոտանաւորներ գրել այդ շէնքերի պատերի վրա՝ այդ ֆրանսիացու հանճարն է միայն ընդունակ ստեղծելու։

Մինչև լոյս միլիօնաւոր ժողովուրդը փողոցներից և հրապարակներից տները չը քաշվեց։

Այդ օրը, իբրև օտարականների մի խումբ, ֆրանսիացի կանայք և մարդիկ, որոնց հետ հարևաններ էինք, հրաւիրեցին մեզ հիւր իրանց մօտ ուրախանալու, ուր ֆրանսիացի բուրժուաներից բաւական գժգոհութիւն յայտնեցին խօսակցութեան ժամանակ։

Ս. Գարագաշ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

12 յուլիսի

ԲԵՐԼԻՆ (Պաշտօնական)։ Յուլիսի 11-ին Աֆրիկայում արած աջող ճանապարհորդութիւնից յետոյ վերադարձաւ ռուսահպատակ գէօլոգ Կիրշշէյն, Բերլինի համալսարանի ասիստէնտը և այն արշաւախմբի անդամը, որ ձեռնարկել է Մեկլենբուրգի դուք. Ադոլֆ Ֆրիդրիխը։ Դոկտոր Բեռներ։

ՆԻԿՕԼԱԵՎ։ Յուլիսի 11-ին այստեղ մաժանած առևտրի մինիստրը տեսաւ նաւահանգիստը, այցելեց առևտրական դպրոցը և Եախտ-կլուբը, ապա նախաճաշիկ ընդունեց բօրսային կոմիտէտի նախագահից։ Քաղաքագլուխը մի ընդարձակ զեկուցում ներկայացրեց մինիստրին տեղական նաւահանգիստների կարիքների մասին։ Մինիստրի նախագահութեամբ կայացաւ բօրսային ընկերութեան ժողովը։ Երեկոյեան մինիստրը ճանապարհ ընկաւ Խէրսօն։

ՕԴԷՍՍԱ։ Ժամանակաւոր գեներալ-նահանգապետը հրատարակեց պարտադիր կանոններ արհեստանոցներում ծառայողների նորմալ հանգստութեան մասին, որ կազմել է դուման համաձայն 1906 թւի սեպտեմբերի 15-ի օրէնքի։ Այդ կանոններով բանւորական օրը բոլոր արհեստաւորների համար, բացի հացթուխների համքարից, սահմանվում է 12 ժամ, 2 ժամ ընդմիջումով ճաշի համար. 17 տարուն չը հասածները ազատվում են 3 ժամով՝ դպրոցներն այցելելու համար։

ՌԻԳԱ։ Վօլմարեան բանտից փախան չորս նշանաւոր քաղաքական կալանաւորներ, բաղնիքի առաստաղը քանդելով։ Կալանաւորված է վերակացուն։

ԲՕՄԲԷՅ։ Յուլիսի 11-ի երեկոյեան անկարգութիւնները վերսկսվեցին գործադուլ անողների կողմից։ Անգլիական զօրքերը յարձակման ենթարկվեցին. կրակում էին գործադուլ անողները, որոնցից մի քանի մարդ սպանվեց։ Գործադուլ անողները բռնեցին գնացքը Պունայից, փշրեցին պատուհանները վագոններում, յարձակւում գործեցին զօրքերի վրա, որոնք գալպ տուեին։ Երեկոյեան անկարգութիւնները սաստկացան։ Յարձակման են ենթարկվում գլխաւորապէս պաշտօնեաները և ոստիկանները, որոնց վրա ամբոխը քարեր է նետում։ Զօրքերը գալպ տուին, որի ժամանակ, վերջին տեղեկութիւնների համեմատ, սպանված են 5, վիրաւորված են 43 մարդ։ Ամբոխի ընթացքը երկիւղալի է երեւում։

ՄԻՏԱՎԱ։ Յուլիսի 11-ին արտակարգ գնացքով Լիբավայից ուղարկված են զօրախումբ և բռնած սայլեր Տէլշի գաւառա[illegible] քաղաքը։ Նոյնպիսի օգնութիւն է ուղարկված ուրիշ քաղաքներից ևս։ Ուղարկված է երկու վաշտ զօրք սկսված կողոպուտների պատճառով։ Յուլիսի 12-ին, ստացված մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, քաղաքից մնացին միայն մի քանի տներ։

ԿԻԵՎ։ Յուլիսի 12-ին, ցերեկվայ ժամը 12-ին, չորրորդ համառուսական համագումարի պատգամաւորները հաւաքվեցին կրօնական-կրթական ընկերութեան դահլիճում։ Ֆլաւիան միտրոպոլիտը ծայրագոյն վարդապետների ու քահանաների մասնակցութեամբ մաղթանք է կատարել։ Ներկա էին բոլոր երեք միտրոպոլիտները, սինոդի օբեր պրօկուրօրը, 7 արքեպիսկոպոսներ, համագումարի 500-ից աւելի անդամները Եւրոպական և Ասիական Ռուսաստանի զանազան տեղերից, սինոդի աւագ պաշտօնեաները, Պետական Խորհրդի անդամ կոմս Շե[illegible] բրմետևէվը, [illegible] նահանգապետը, քաղաքագլուխը և տեղական իշխանութեան ներկայացուցիչներից շատերը։ Մաղթանքից յետոյ Ֆլաւիան միտրոպոլիտը դիմեց ներկայ եղողներին մի համառօտ շնորհաւորական ճառով, ուրախութիւն յայտնեց, որ համագումարը հաւաքվում է Կիէվում, ուղղափառութեան այդ օրրանում, և խնդրեց Պետերբուրգի միտրոպոլիտ Անտոնիին բանալ համագումարը։ Համագումարը բացված յայտարարելով, Անտոնի միտրոպոլիտը մատնանշեց միսսիայի խաղաղ բնաւորութեան վրա։ Սինոդի օբեր-պրօկուրօրը ողջունելով համագումարը, ասաց, որ ապրիլի 17-ի ուկազը, որով բոլոր ռուսահպատակներին դաւանութեան ազատութիւն է տրված, շօշափեց բազմամիլիօն ռուսաց դաւանութեան հարցը, որ այսուհետև պաշտպանվելու է ոչ թէ արտաքին ոյժով, այլ ներքին համոզմունքի ոյժով։ Այսուհետև ուղղափառ եկեղեցու նպատակը պէտք է լինի միսիօներական գործի բարեւլաւումը և ներքին աշխատանքը։ Ճառախօսը ցաւակցութիւն յայտնեց, որ Թագաւորի այդ մեծահոգի շնորհը առաջ բերեց ոչ թէ շնորհակալութիւն, ոչ թէ խաղաղութիւն, այլ հակառակութիւն և թշնամութիւն, որ այլադաւաններն ու ոչ ուղղափառները փոխանակ օգտվելու շնորհված ազատութիւնից տեղ տեղ սկսեցին սպառնալ ուղղափառութեանը։ Այդ բանը ճառախօսը վերագրում է անցողական ժամանակի ազդեցութեանը։ Ի վերջոյ նա մատնանշեց, որ Թագաւորի շնորհած ազատութիւնը ուղղափառութիւնը քայքայելու և թուլացնելու համար չէ տրված. Թագաւորը ուղղափառութեան արժանապատւութիւնն ու վեհութիւնը նկատում է անդադրում։ Նրանից յետոյ համագումարը ողջունեց երկրի կառավարիչ Սուխոմլինովին։ Անտոնի արքեպիսկոպոսը մատնանշելով համագումարի կարևոր նշանակութիւնը և ուղղափառութեան դրութիւնը Ռուսաստանում, առաջարկեց շնորհակալութեան հեռագիր ուղարկել Թագաւորին։ Բնագիրը հաւանութիւն ստանալուց յետոյ, երեք անդամ նուագվեց հիմնը և ապա կարդացվեցին ստացված շնորհաւորական հեռագիրները արքեպիսկոպոսներից, միաբանութիւնից և աջակողմեան կուսակցութիւններից։

ՀԱԱԳԱ։ Պաշտօնական լրագիրը հաղորդում է, որ նախագահ Կաստրօն պահանջեց նիդէրլանդական դեսպանից ներկայացնել իր անցագիրը, ի նկատի առնելով այն որ «Նիդէրլանդշէ Բեվիւ» թերթում տպագրված է դեսպանի յօդուածը Կաստրօյի հաստատած րէժիմի դէմ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Չումայի վարակման դէմ կռւող մասնաժողովը հաղորդում է, որ Աստրախանի քաղաքային հիւանդանոցում, յուլիսի 8-ին, մեռել է խօլերայից Բագւից եկած մի բանւոր։ Աստրախանում խօլերայից հիւանդացել է տեղական բնակիչներից մէկը։ Ցարիցինում խօլերայի հիւանդութեամբ վարակված են կասկածվում երկու հոգի։ Օտրադնայա գիւղում պատահել է մի մահվան դէպք։ Ցարիցին եկող նաւերի վրայից տարել են 5 հիւանդ, որոնցից երեքը մեռել է։ Վերջին ութ դէպքերից բակտերիօլօգիական քննութիւնը հաստատել է երեքը խօլերայով վարակված։ Աստրախանի և Սարատովի նահանգները, Վօլգա գետը Աստրախանից սկսած մինչև Սամարա և Վօլգայի ափերի մօտ ընկած Սամարայի և Նիկօլաեվսկի գաւառները, Սամարայի նահանգի՝ Սիզրանի և Սամարայի գաւառները խօլերայի կողմից համարվում են վտանգաւոր։

ԿԻԵՎ։ Ժողովը վերջացել է համագումարի քառօրեայ միսիօներական գործիչ Սկվօրցօվի զեկուցումով։ Յիշատակելով միսիայի պատմութիւնը և բնորոշելով աչքի ընկնող գործիչների, զեկուցանողների աշխատութիւնները՝ համեմատութեան դրեց ուղղափառ ռուսաց աւանդութեան և արտասահմանեան կաթօլիկների ու բողոքականների միսիաները։ Շօշափելով ձախակողմեան մամուլի սխալ մեղադրանքները միսիայի և միսիօներութեան հասցէին, ճառախօսը բացատրեց այդ նրանով, որ վերջիններս հանդիսանում են առաջապահ մարտնչող ոյժերը և պաշտպանները ուղղափառութեան։ Վերջում նա շեշտեց, որ համագումարը բաց է անում իր գործունէութիւնը բարեպատեհ հանգամանքներում, ունենալով իր շարքերում ժամանակցող արտաքին և ներքին միսիօներական յայտնի գործիչներին ու գիտութեան ներկայացուցիչներին։ Մօսկվայից համագումարին ներկայ լինելու եկաւ [illegible] արքեպիսկոպոս Իօաննը։ Անդամները շարունակում են հաւաքվել։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 Թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամէն օր, բացի կիրակի օրերից

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հւ.

Ն. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՅԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հւ.

Ն. Տ. ՄՈՒՐԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հւ.

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Պ. Մ. ԹՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հւ.

ԿՆ.-ԲԺԻՇԿ Ա. Ի. [illegible]—1½—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորներին ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Ընդունում է
Ներքին եւ ջղային
հիւանդութիւն ունեցողներին

Պեատիգօրսկում, Վերին բուլվար № 14, տ. իշխ. Գիրէյի. Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей. 30—25

Մեղրիի երկսեռ. դպրոցի համար
հարկաւոր են
ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
հայոց լեզուի և հայերէն դասաւանդվող առարկաների, և
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
ռուսաց լեզուի համար

Պայմանների մասին տեղեկանալ «Մշակի» խմբագրատանը Լ. Դանիէլեանից, կամ դիմել դպրոցի հոգաբարձու Գէորգ Իսրայէլեանցին՝ через Ордубатъ. сел. Мегри. 3—2
(Հ. Կ. Հ.)

ԲԺԻՇԿ

Ա. ՍԱՐԳՍԵԱՆՑ

Ընդունում է ամենայն օր բացի կիրակի և տօն օրերից, երեկոյեան ժամը 6—7 ներքին և երեխայոց հիւանդութիւնների։
Великокняжеская № 69. (օ. մ.) 6—6

Լոյս տեսաւ
Խաչատուր Խաչատրեանի

Ծիծաղաբեր

Հայրիկ, Պարոնեան, Պըլը-Պուղի, Փոշ Մխիթար, Դանտէ, Լաֆօնթէն, Եզոպոս, Ոզոմպիանոս, Մօլլա Նասր-Էդդին, Կրիլօվ, Բալակիրեւ և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ։

182 ԸՆՏԻՐ զուարճախօսութիւն-անեկդօտներ, 112 երես

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԷԿ

Դիմել բոլոր գրավաճառներին։ Ինձանից գումարով գնողներին 20% զեղչ և ճանապարհածախսը իմ հաշւին։ Ցանկացողները կարող են դիմել՝ Тифлисъ, Хачатуру Хачатріанъ, 9 уч. Лысогорскій пер. № 10.
(Հ. ու. Կ.) 8—6

ԷԳԻԼԻՍՏՕՐ

❖ՆԻԼ❖

աւերում է վայրկենապէս, վերջնականապէս եւ առանց ցաւի ՄԱԶԵՐԸ եւ ԱՂՈՒԱՄԱԶԸ, որոնք այլանդակում են դէմքը եւ մարմինը։ Առաջ չէ բերում էպիդերմիսի բորբոքում։ Մորթը դառնում է կակուղ և թաւշային. գործ են ածում արտիստները և բարձր արիստոկրատիան։ Միակն է, հաւանութիւն գտած հռչակաւոր բժիշկներից։

ՈՍԿԷ ՄԵԴԱԼ.

Սրուակի գինը 4 ր.։ Առաքումը ձրի։ Verdeille Pharmacien de 1-re classe, 87. Rue de Levis, Paris. Պահեստը՝ Кавказское О-во Торговли Аптекарскими Товарами въ Тифлисѣ. (15, 30) 13—[illegible]

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

ՅՈՎՍԷՓ
Մելիք-Ջհանեանցի

Церковная ул. д. № 11. (близъ памятника Воронцова)

Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երթեւեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։ Այստեղ կազմակերպված են և խմբական պարապմունքներ միջնակարգ դպրոցների բարձր դասարաններ մտնել ցանկացողների համար։ Առարկաներ աւանդելու համար հրաւիրված են մասնագէտ ուսուցիչներ։ Ի միջի այլոց աւանդվում է և իտալերէն։
(օ. մ.) 20—5

ԵՐԿՈՒ ՀԱՅ
ՕՐԻՈՐԴՆԵՐ

որոնցից մէկը աւարտել է Թիֆլիսի օրիորդաց գիմնազիայի 8-րդ դասարանը և միւսը բռնել է ուսումնարանական շրջանում ցենզի քննութիւն հայերէնի և թւաբանութեան մասնագիտութիւնից՝ որոնում են համապատասխան պաշտօններ հայոց դպրոցներում։ Կարող են գնալ գաւառներ ևս։ Պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրատանը։
(Կ. Հ. Կ.) 3—2

ԿԱԽ-աւանի

Հայոց միդասեան երկսեռ խառը դպր. համար

հարկաւոր են

մի փորձված աւագ-ուսուցիչ ճեմարան կամ Ներսիսեան դպրոց աւարտած և մի վարժուհի ուսուցչութեան և ձեռագործութեան վկայականներով. նրանք պէտք է լինեն ամուսիններ կամ քոյր ու եղբայր։

Ցանկացողները կարող են գրել պայմանների մասին մինչև օգոստոսի 10 ը հետեւեալ հասցէով՝ Сел. Кахи, Закатальс. окр., Ктитору армянской церкви Карапету Гарибужанянцъ. (Կ. Հ. Կ.) 3—2

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ"
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ
„Этикетъ утвержденъ прав." մակագրութեամբ

Գլխաւոր պահեստատեղին գեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում
(10, 20 30) 50—17

Լոյս տեսաւ և ուղարկվեց բոլոր բաժանորդներին

„ՅՈՒՇԱՐԱՐ"

Թատեր.-գրական գեղարուեստական պատկերազարդ երկշաբաթաթերթի № 6—7 միացեալ համարները հետեւեալ բովանդակութեամբ.

Լեզուի խնդիրը.—Ազատեանի մի անտիպ նամակը և բանաստեղծութիւնը.—Անիի միջնաբերդի պեղումները.—Սիմվօլների գրքից.—Էմին Տէր-Գրիգորեանի և Ա. Մանդինեանի թատ. յիշողութիւնները.—Ինձ համար.—Ինչպէս են պարապում արտիստները.—«Յուշարարի» թղթակիցներից.—Նամակ խմբագրութեան.—Սիրուն.—Թատր. քրոնիկ.—Լուրեր.—Նոր ստացված գրքեր.—Պօստ-արկղ.—Յայտարարութիւններ։ ՊԱՏԿԵՐՆԵՐ. օր. Քնարիկ.—Ալեքսիէվ-Մէսխիէվ.—Շուշաններ.—Բաթումի թատերասիրաց խումբը։

Բաժանորդագրութիւնը շարունակվում է. տարեկան 5 ր., արտասահման 6 ր.։ Դիմել Тифлисъ, редакція „Ушараръ", կամ Tiflis, redaction «Houcharar».
787 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(Ե. Հ. Զ.) 100—90

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Անցեալ տարիների նման ընդունում է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլօվօդսկում, հիւրանոց «Ռօսսիա»։
(ա. օ.) 100—83

Լոյս տեսաւ և վաճառվում է
Ներսէս Քահանայ Հերթեւցեանի
«ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔՈՒՄ»,
«ԵԿԵՂԵՑԻՆ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴՐՈՒՄ»
աշխատութիւնը

Գինն է 60 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, ктижный магазинъ „Гуттенбергъ",
կամ
Հեղինակին՝ Романовскій хуторъ, Куб. обл. священнику Н. Эртевціану.
(Ե. Հ.) 2—1

Վօրօնեժի նահ. Ռօսսօշ արուարձանում ունեմ
ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ
(բակալէյնի, գալանտերէյնի, երկաթեղէնի, մրգեղէնի և խմիչքեղէնի)
ԱՊՐԱՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԵԾ ԽԱՆՈՒԹ,
որը կամենում եմ

ՎԱՃԱՌԵԼ

Ցանկացողները պայմանների մասին թող դիմեն ինձ հետևեալ հասցէով. Слоб. Россошъ (Ворон. губ.). Михаилу Александровичу Кеворкову.
(25, յուլ. 1, 15, 29, օգ. 3) 5—3

Ղարաքիլիսեցի

Յարութիւն Յովհաննիսեանը խնդրում է բարեհաճ անձանց՝ որդեգրել իր չորս տարեկան [illegible] տղային։

Հասցէ՝ Сюас. ул. каравансарай Манташева дворникъ Сарибекъ Онановъ.
(Հ. Կ. Հ.) 3—3

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Մ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

ԻՒՐԵՎԻՐՋԻՑ ՓՈԽԱԴՐԱԾ ՀԵՏԵՒԵԱԼ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

1. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Ա. տարի, 2 րդ հրատարակութիւն, զգալի ճոխացրած 15 կ.
2. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Բ. տարի, 2 րդ հրատարակութիւն. լաւելուածներով ու պատկերներով 25 կ.
3. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Գ. տարի 25 կ.
4. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Շապօշնիկօվից ու Վալցօվից փոխադր. կոտորակների տեսութիւն և ընդհանուր կանոններ. պատկերազարդ Ա. մաս. 30 կ.
5. Համառօտ երկրաչափութիւն. գրոյցներ երկրաչափական մարմինների մասին Ա. մաս. 25 կ.

Թւաբանական օրինակների Ա. և Բ. տարի ձեռնարկները ընդունված և թոյլատրված են հայոց ծխական դպրոցների համար Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդի կողմից։ (Ե. Կ.) 6—1

Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրախանութը։

Թիֆլիսի Քաղաքային Ինքնավարութիւնը

Սրանով յայտարարում է, որ ազատ են
Հետեւեալ ստիպենդիաները

Երկու ստիպենդիա Թիֆլիսի իգական II գիմնազիայում, երկուսը Թիֆլիսի ըէալական դպրոցում (դրանցից մէկը տեղական քաղաքային դպրոցներն աւարտածների համար է, իսկ միւսը Թիֆլիսեցի հայ երեխաների համար), մէկը Թիֆլիսի տղայոց I գիմնազիայում (Թիֆլիսեցի մէկի համար) և մէկն էլ Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական ֆակուլտէտում։

Խնդիրները, որոնց պէտք է կցված լինեն այն դպրոցական հիմնարկութեան վկայականը, որտեղ խնդրատուները սովորում են, նոյնպէս և՝ մետրիկական վկայականը կամ նրա պատճէնը,—ուղարկվում են Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան մինչև սեպտեմբերի 1-ը 1908 Թ.։ 2—2
(ապ.)
10, 15)

ՅՈՒԼԻՍԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ
Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի եւ Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ

ԼՈՒՍԱԲԵՐ

ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Երկրորդ տարի
Գինը 45 կ.

Առաջին տարի
Գինը 30 կ.

Գլխաւոր պահեստը Թիֆլ. „ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ" գրավաճառանոցում. Բագու՝ „Сотрудникъ" 10—9
Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ"
(օ. մ.)

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հայոց դպրոցների համար
ԱՐ. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆԻ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Մոսկվայի ուսուցիչների ժողովածուները I, II, III, IV տարիների համար և Շապօշնիկովի ու Վալցօվի ժողովածուները V և VI տարիների համար փոխադրած և յարմարեցրած հայոց դպրոցների ծրագիրներին։

1. Թւաբանական խնդիրներ եւ օրինակներ I տարվ. դասընթ. առանձ. գրքոյ. գ. է 12 կ.
2. » » » Ա. պ. I և II տ. դասընթ. միասին Գ. տպ. » 30 կ.
3. » » » Բ. պ. III տ. դասընթ. Գ. տպ. » 30 կ.
4. » » » Գ. պ. IV տ. դասընթ. Բ. տպ. » 30 կ.
5. » » » Դ. պ. V տ. դասընթ. 40 կ.
6. » » » Ե. պ. VI տ. դասընթ. 50 կ.
7. Ձեռնարկ թւաբանութեան հայոց դպրոցների համար 50 կ.

Գումարով գնողներին բաւարար զեղչ։

Դիմել Թիֆլիս՝ Абасъ Абадская площадь Аршаку Спарапетяну և կամ «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» և այլ գրախանութներին։ 6—4
գրախանութը Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ".
(օ. մ.)